



14

3-28

Հ. Ա. Բ. Հ.

ԳՐՈՂԵՏԱՐՆԵՐԻ ԲՈՒՂՈՐ ԵՐԿՆԵՐԻ, ՄԻԱՅՆ

ԴԵԿՐԵՏՆԵՐԻ ԵՒ ՀՐԱՄԱՆՆԵՐԻ  
ԺՈՂՈՎ ԱԾՈՒ



1920 թ. Նոյեմբերի 29 - 1921 թ. Փետրվարի 18.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՆԵՐԻՆ


Է Զ Մ Ի Ա Ռ Ի  
ԳՐԱԿԱՆ ԲԱՍՏԻՏՈՒՏԻ ՏՊԱՐԱՆ

1921

Հ. Ա. Ի. Հ.

345 (47.925) ԹՐՈՒԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՄԵՐԻ, ՄԻԱՅՆ

ԳԵԿՐԵՏՆԵՐԻ ԵՒ ՀՐԱՄԱՆԵՐԻ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ



ԹՐՈՒ

1920 թ. Նոյեմբերի 29—1921 թ. Փետրվարի 18.

ՊԵՏԵԱՆ ՀՐԱՄԱՆԵՐԻ

Է Զ Մ Ա Դ Ի Ն Ի Ւ

ԳՐԱԿԱՆ ԲՆԱՏՏՈՒՅՑ ՏՎԱՐԱՆ

1921



III-20969

## ԱՌԱՋԱԲԱՆ

Սոյն հրատարակութեան առաջնակարգ անհրաժեշտութիւնը վաղուց եր զգացւել և զեռ նախ, քան վեարւարի 18 ը նախնական քայլեր էին արւած այդ ուղղութեամբ:

Քաղաքացիական կուի շրջանում, սակայն, նարաւոր չեղաւ շարունակի սկսած աշխատանքը, իսկ երբ այդ հնարաւորութիւնը առեղծւեց՝ միաժամանակ պարզեց գործի արտակարգ գժւարութիւնը:

Ընդհանուր լեզւական-խմբագրական թերութեան, օրէնսդրական տեխնիկայի անփորձութեանը, մասնակի հրատարակութիւնների բացակայութեան, տպագրական գժւարութիւններին աւելանում է և այն, որ քաղաքացիական կուի ընթացքում ոչնչացել են թէ հայեղկումի և թէ մի շարք կոմիսարիաների գիւանն ու արխիւնները, որով «Գեղեցների ու Հրամանների Ժողովածութիւն» խմբագրութիւնը զրկւում է այն նախնական նիւթերից, որոնք անհրաժեշտ էին ներկայ հրատարակութեան բովանդակութեան հիմնական վերստուգ-մթն համար:

«Ժողովածութիւն» այս պրակի համար հիմնական աղբիւր է ծառայել և «Կոմունիստ» պաշտօնական թերթը, որովհետեւ թէն ի պաշտօնէ չի յայտնագրւած, քայցլսելեայն ընդունել է, որ գեղեցների ու հրամանների հրապարակման միջոց և պաշտօնական հրատարակութիւնը համարւում էր այդ թերթը, առաւել ևս, միաժամանակ, որ զա ամենից առելի լրիւն է այս հրատարակութեան ահսակէտից:

Եյս հիմնական աղբիւրը ստուգել ենք այն նախնական նիւթերով, որ ստացւել են առանձին Կոմիսարիաններից:

Խմբագրութիւնը աշխատել է, բայ ննարաւորին, տալ մինչ այժմ հրապարակւած օրինադրութիւնների լրիւ Ժողովածուն և միաժամանակ մնալ հարազատ պաշտօնական հրապարակման ու հրատարակման:

Բայ կարելոյն Արև ժողովածու տալու պահանջը սախալէ է տպագրել և այն զեկրեաներն ու ճրամանները, որոնցից շատերը ներկայումս գործող օրէնք չեն համարում, սակայն անցհազում տառջացրել են իրաւական-քաղաքական էֆֆեկտ, առաւել են, որ նման ճրատարակութիւնը բացի անմիջական գործնական արժեքից անի նաև քաղաքական-պատմական նշանակութիւն:

Չեն տպագրւած միտին այն մասնակի ճրամանները, որոնք ուզգակի թէ աննուզզակի, չեն արտայտյառում որիէ իրաւական դրութիւն: կամ քաղաքական արժէք:

Չեն տպագրւած նաև այն զեկրեաներն ու ճրամանները, որոնք մինչ 1921 թ. փետրուարի 18-ը ոչ ճրապարակւել են և ոչ էլ ճրատարակւել օրինական կարգով, որովհետեւ նրանք նորմագծոյին բնոյին են պահել և օրինական ոյժի մէջ չեն մտել:

Քնաղըն կամ պաշտօնական ճրատարակութեանը ճարագայ մալը՝ խմբագրութեան օրինական պարտականութիւնն է, աղոտիս խմբագրութիւնը կփոխարկւէր օրէնսդրի: Ահա թէ բնչու ընդհանուր տոմագը նախնական ճրապարակման ճաւատարիմ ենք մնացել, զգարդ հանդերձ գրա թերութիւնները:

Դեկրեաներն ու ճրամանները պատահական ու թուոցիկ թերով համարագրւած են եղել սոսկ և խմբագրութիւնու անհրաժեշտ է համարել ըստ բովանդակութեան նիւթի՝ պատշաճ լիրա նոպիր տալ, տուաւել ես, որ թուոցիկ թեկրով համարագրութիւնը ներկայ ճրատարակութեան մէջ անթույլարելի է:

Ամեն մի զեկրետի ու ճրամանի ներքիւ մէջ են ըերբուժ «Կոմունիստի» համապատասխան թիւն ու համարը եթէ պատգարւած են եղել պաշտօնապէս և կամ նոյն իսկ զեր տած եղել որովէս քրոնիկոնի նիւթի:

Այս պլանը ընդունվել է 1921 թ. նոյեմբերի 29-ից մինչ 1921 թ. փետրուարի 18-ը ճրապարակւած զեկրեաներն ու ճրամանները:

Առաջին պրակին յաջարզում է այս օրերս լոյս տեսներէ երա կրորդ պրակը, որտեղ տպագրւած են 1921 թ. Ապրիլի 2-ից մինչ Թզոստոսի 1-ը հաստատւած դեկրեաները, որոշումներն ու ճրամանները, իսկ Օգոստոսի 1-ից յետոյ հունաստած դեկրեաններն ու որոշումները լոյս են տեսնում պարբերաբար Դեկրեանների և որոշ շումների ժողովածուի մէջ:

1921 թ. նոյեմբերի 29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼԵՅԻՆԿԱՆ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

## ԴԵԿԼԱՐԱՑԻՈՆ

1. Հայաստանը Սօցիալիստական Խորհրդային Հանրապետութիւն յայտարարելու մասին

Գրանցուած բարու եւկրների մթացել

Հայաստանի աշխատաւորութեան

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի ապստամբ աշխատաւոր ժողովրդի կամքով ու ցանկութեամբ՝ Հայաստանի Կոմունիստական (Բոլշևիկական) կուսակցութիւնը այսօրւանից Հայաստանը յայտարարում է Սօցիալիստական Խորհրդային Հանրապետութիւն: Այսօրւանից Խորհրդային Հայաստանի կարմիր գրօշակը պաշտպանելու է նրա աշխատաւոր ժողովրդին ճնշողների գարաւոր լծից: Անսահման ծանր է այն ճառանգութիւնը, որ մնում է յաւիտենապէս անհետացող գաշնակցական կառավարութիւնից ազատագրւած Հայաստանում: Իր ոճրագործ քաղաքականութեամբ նա երեք տարւայ ընթացքում ոչ միայն անընդունակ գտնւեց երկիրը խաղաղ վիճակի հասցնելու, ոչ միայն ժողովրդին չագատեց ազգատութիւնից ու կորուսաից, այլ զեռ ևս այսի քաղաքականութեան տասնեակ հազարաւոր զոների թւին առաջցրեց անօթեան հայերի անթիւ, անհամար զնդեր, որոնք յուսահատ գրութեան հասած՝ չորս զին մահ ու անէծք էին տարածում: Քաղաքները աւեր, շիները ամայի ու անմարդաբնակ, երկաթուղիները քարու քանդ կանգ առած, ժողովրդի լաւագոյն զաւակները սահմանավէճերի ու ազգամիջեան ընդհարութեների արդիւնք անմիտ ու քմիտաճ պատերազմներում սրախողիսող, այն պատերազմներում, որոնցով սնում ու մնում էր գաշնակցական կառավարութիւնը: Եղը ու կական, աղի արցունքներ են, որ լուսում ու հոսում են Հայաստանի մի ծայրիցմիւլ: Աւ այժմ իրեն խնամակալ Անտանտայից աշքաթող, երեսի ձգած Դաշնակցութիւնը, անարդ-վաղկոտութեամբ, համարեա առանց կուի, ամբողջ երկիրը յանձնելուց յետո, մի երկու խղճուկ էսէրների ու էսդէկներին

միջոցով է ուզում փրկել իր օրհասական գրութիւնը։ Նա պատրաստ է ինչ գնով էլ լիսի հաշտութիւն կնքել, միայն իրեն կաշին ազատել կարողանաւ։ Պարզ է, որ հաշտութիւնը ժողովրդի, երկրի շահերից չի բղխում։ Դաշնակցութիւնն է, որ ուզում է վիրապատ Հայաստանում իր իշխանութեան առերկոյթ տեսքը սեփական ձեռքերում պահել։ Բայց այդ իշխանութիւնն արդէն խլած է Դաշնակցութիւնից ապստամբ ժողովրդի կամքով ու ցանկութեամբ և նրան վերագրած չկայ։ Անհամար է ժողովրդի, բանւորութեան ու դիւղացիութեան շահերի դեմ կատարած ոճիրների թիւը։ որպիսի թափով են նրանք վառել աշխատաւորութեան բուրժուա՛նացիունավատական բնազդները, որպիսի լովիր բնոյթ է կրել նրանց՝ Անտալիայի իմալեթայիստական ծրագրեներին աջակցելը։ Որքան որեր են ճօնել հարևանների հասցէին՝ աղդամիջեան կոիւներ տուաջացների Հայաստանի ժողովրդի արիւնը քամելու։

Եւ որքան աւանտիւրիտական է եղել դաշնակցական Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը, այնքան իիստ է եղել նրա ներքին քաղաքականութիւնը՝ որը իր ապիկարութեամբ ու վայրենի արտայատութիւնների շնորհիւ երկիրը ամայացրել է, աւեր գարձրել։

Բոլոր ճնշւած ժողովրդների պաշտպանը՝ Առուսաստանի Խորհրդային իշխանութիւնը շնոր անդամ է ցանկացել ազգել դաշնակցական կուսակցութեանը վրայ, նրան խլել Անտալիայի գիշատիչներից և այդպիսով հնարաւորութիւն տալ բազմատանջ ու դաշնակցականներից դիւաճար Հայաստանի աշխատաւոր ժողովրդին ազատ շնորհ կուսել ենք կոմունիստների համակարգութեան մենք տեսել ենք կոմունիստների նկատմամբ գործ դրած խստութիւնների նորանոք քրքիջներ։ Բայց փոխանակ ցանկալի հետեանքների համակարգութեան մենք տեսել ենք կոմունիստների նկատմամբ գործ դրած խստութիւնների կախաղանների ու զնդականարութիւնների նորանոք քրքիջներ։ Ժողովրդական ցաման բննկումը՝ որ մայիսին ստացաւ համաժողովրդական ապստամբութեան բնաւորութիւն՝ խեղդեց արեան այն հեղեղներում, որոնցից չեն կշտանում զաղանացած մառդերիստները։ Մեր այդ օրինակը չունեցող կուին, որ մենք վարում էինք՝ Հայաստանի կառավարիչներն Անտալիային թելադրումով պատամբանեցին մի անասելի վակսանալիայով, որի դեմ

Խորհրդային Թուսաստանը մինչև այժմ զդալի աջակցութիւն չկարուցած ցոյց տալ, որովհետեւ զբաղւած էր քաղաքացիական կույն կարեւոր ճակատներում։ Նրանք կամնում էին նրա բոլոր ոյժերը։ Լեհաստանի հետ կնքած հաշտութիւնը կցարական վերջին գեներալ Վրանգելի աննման պարտութիւնը, այժմ աղատում են Վարժիր Բանակը։ Խորհրդային Թուսաստանը այժմ աղատամբ ժողովրդի հրաւերով հնարաւորութիւն ունի եղբայրական օգնութիւն ցոյց տալու նրան ու Հայաստանը Անտալիայի գործականների—դաշնակցական կառավարութիւնից վրկելու։

Նա այժմ հնարաւորութիւն ունի երկրի առողջ ոյժերը հաւաքելու, վերակենդանացնելու և Խորհրդային Հայաստանի խաղողաշխատանքի հիմքը գնելու։ Ազատ Խորհրդային Հայաստանի կարմիր գրոշակը յուսահատութեան ու զամնութիւնների անգունդից դուրս կըքերէ նրա աշխատաւոր զաւակներին։ Յաղթական ինտերնացիոնալի առաջին հնչւմների հետ ընդմշշտ կաննետանա Հայաստանում գոյութիւն ունեցող ցեղական ու ազգային պատահումների ուրւականը և աեղի կտա ժողովրդների եղբայրութեան նրանց առօրեայ կեանքում։ Հայաստանի գիւղացիութիւնը իր ձեռքը կառնի ամբողջ նողը, որ պատկանում էր մելիքներին՝ ու ինչպէս և վանքապատկան, եկեղեցապատկան ու մզկիթների սեփականութիւն համարւող նողերը։ Ժաղովրդի ձեռքը կանցնեն անտառների հարստութիւնը, ջրերը, լճերն ու հանքերը — Հայաստանի աշխատաւոր ազգաբնակութեան կարիքները բաւարարելու համար։ Նոյն նպատակով Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան սեփականութիւն կը յայտարարւեն աւել կամ պակաս ծաւալի գործարաններ, որոնց ստեղծող բանւորները կը տիրանան ազատ աշխատանքի։ Մագութիւն պակասութեան պատճառով կանգ առած Հայաստանի երկաթուղիները նորից կըգործեն Աղքրեջունի Խորհրդային իշխանութեան օգնութեամբ և կրկին կըքերականդնի աղատազբւած Հայաստանի ընդհատւած կապը։

Խորհրդային Թուսաստանը մեզ եղբայրական օգնութիւն ցոյց կը տայ, հնարաւոր չափով հաց ու ճոթեղէն հասցնելով։ Աշխատա-

որ ինտելիգենցիան Խորհրդային Հայաստանին, նրա շինարարական գործին իր փորձով, մտաւոր ունակութիւններով աջակցութիւն, մտանակցութիւն ցոյց տալու կատարեալ հնարաւորութիւն կստանայ:

Անյապաղի չիք կը յայտարարւին Հայաստանի բոլոր պետական պարտքերը Ծնտանտային (մասնաւորապէս Ամերիկային) պարտքերը, որ գաշնակցական կառավարութիւնը ուզում էր քամել Հայաստանի բանւորից ու գիւղացուց:

Խորհրդային Հայաստանի Յեղափոխական Կոմիտէն ապահովւած է եղբայրական Խորհրդային Ազրբէջանի երաշխիքով և խորապէս հաւատում է, որ Հայաստանում Խորհրդային իշխանութիւն հաստատելով, ընդմիշտ վերանալու են այն վիճակի հարցերը, որոնք պատճառ են զարձել երկու երկրների բանւորների ու գիւղացիների արեան հեղեղներ թափւելուն Այս համոզումով՝ մենք մեր յեղափոխական ողջոյնն ենք ուղարկում Ազրբէջանի աշխատաւոր ժողովրդին, Բագրէ պրոլետարիատին, իբր Անդրկովկասի Սօցիալիստական Յեղափոխական Առաջապահ գնդի, ողջոյններ ենք ուղարկում նաև Ազրբէջանի Յեղափոխական Կոմիտէին:

Հայաստանի Յեղափոխական Կոմիտէն լի է հաւատով, որ նա վայելում է նաև Տաճկաստանի աշխատաւորութեան համակրանքը, այն ժողովրդի, որն արդէն հասկացել է Անտանտայի գարաւոր լծից ազատելու անհրաժեշտութիւնը ևորը կաչած է Արենելքի յեղափոխականացման մէջ խոշոր գեր կառարելու: Հաւատում ենք, որ իմպերիալիստական լծից ազատագրւող ժողովրդական Տաճկաստանը մեզ ևս իր Անդրկովկասի հակառակորդ համարելով, մեզ եղբայրական ձեռք է մեկնելու այժմ, երբ մենք տապալեցինք մեր թշնամուն և նրա հետ միասին կոիւ ենք մզում Անտանտայի գիշատիչների գէմ: Մենք համոզւած ենք նաև, որ ոչ թէ յաղթողի սուրն է թելադրելու Խորհրդային Հայաստանի ու աշխատաւորական Տաճկաստանի միջև կայանալիք հաշտութեան պայմանները, այլ Խորհրդային Հայաստանի ու աշխատաւորական Տաճկաստանի ազատ ժողովրդների եղբայրական համերաշխութիւնն ու համունայնութիւնը:

Ներկա ծանր պայմաններում ու լուրջ ըռպէին ընդունելով իշխանութեան ամբողջ պատասխանատւութիւնը, մենք Հայաստանի ժողովրդական ոյժերին կը ենք անում մեզ աջակցել բանւորագիւղացիական իշխանութեան թշնամիների գէմ կուելու և կանչում խորհրդային անդուզ, ստեղծագործական աշխատանքի:

Կեցցէ Հայաստանի Սօցիալիստական Խորհրդային Հանրապետութիւնը:

Կեցցէ Խորհրդային Ռուսաստանի հերոս Կարմիր Բանակը:

Կեցցէ եղբայրական Խորհրդային Ազգը շամի:

Կեցցէ Ռուսաստանի Սօցիալիստական Ֆեղերատիւ Խորհրդային Համբավետութիւնը:

Կեցցէ Կոմունիստական Երրորդ Ինտերնացիոնալը:

Հայաստանի Սօցիալիստական Խորհրդային

Հանրապետութեան Յեղափոխական Կոմիտէի

նախագահ՝ Ս. Կասեան

Աւիս

Բէկալեսն Աղեքսանով

Դուլաթեսն Իսահակ

Մուհեսն Արքանազ

Տէր-Գարբիլեսն Իսահակ

1920 թ. Նոյեմբերի 29

Ղաղտի-Քարվանսարա

Անդամներ

## ՀՐԱՄԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԴԱԿԻ ՎԵՐԱԿԵՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ

Յայտարարելով Հայաստանի Բանակի վերակազմութեան հիմունքները, հրամայում եմ այս հրամանը ստանալուն պէս անյապազիրագործել:

Ամբողջ հրամանատարական կազմը մնում է իրենց տեղերում: Ցիշեցնում ենք, որ Կարմիր Բանակը կազմակերպւած է բոլոր

կանոնաւոր բանակների նման՝ դրւած լինելով խիստ զինւորական կարգապահութեան հիմունքների վրայ:

Հայաստանի Յեղափոխական Բանակի նիմունեցեր

1. Այսուհետեւ Բանակը կոչում է Խորհրդային Հայաստանի Կարմիր Բանակ:

2. Զօրքի բաժանումը սպաների, ենթասպաների և սոսկականների վերացւում է: (Աստիճանները ոչնչացւում են): Արգելում է կը ել քաջութեան կամ առըերական քանչաններ, բացի կարմիր դրօշուի շքանշանից:

Իւրաքանչիւր անձ կոչումն է իր պաշտօնի անունով:

3. Հրամանատարական կողմ նշանակելիս ոչ մի ընտրողական սկզբունք չէ թույլատրում:

Զօրամասերում ոչ մի տեսակ կոմիտէներ չպիտի լինեն:

4. Բոլոր կարմիր բանակաւորները մարտիկից մինչև հրամանատարը ներառեալ, պարտաւոր են Կարմիր Բանակում պահպանել խիստ յեղափոխական կարգապահութիւն, իւրաքանչիւրից պահանչելով իր պարտքի գիտակից և անձնագոհ կատարումը:

5. Զօրամասերում նշանակում են քաղաքական կոմիսարներ, որոնց պարտականութիւնն է զօրամասի քաղաքական տեսակէտով դեկավարելը:

Զօրամասերի պետքի հրամանները պիտի վաւերացւած լինեն քաղաքական կոմիսարի ստորագրութեամբ, տոանց որի հրամանները չպիտի կատարեն: Մինչև նշանակւած կոմիսարների տեղ հասնելը, զօրամասի հրամանատարների կարգադրութիւնները պիտի տրւեն միայն պետքի ստորագրութեամբ:

6. Բոլոր զօրամասերը մնում են իրենց տեղերում:

Առանց համապատասխան կարգադրութեան՝ չէ թոյլատրում կատարել ինքնազլուխ տեղաշարժութիւններ, կամ թէ թողնել իրենց տեղանքները:

7. Հրամանատարական կազմից և կարմիր բանակաւորներից ոչ ոք իրաւունք չունի թողնել իրենց զօրամասը:

8. Ժողովրդական գոյքի փչացնելը, կորցնելը կամ յափշտակելը, պատժում է ռազմա-յեղափոխական օրէնքների ամենամեծ խառութեամբ:

9. Զէնքի ինքնազլուխ թողնելու, վաճառելու, յափշտակելու կամ դիտաւորեալ փչացնելու համար՝ զործողութ է պատժի ամենածանր չափը:

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան ամբողջ բանակի հրամանատար՝ ԴՐԸ

Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. Կոմիտար Սիլին

1920 թ. դեկտ. 2

Հր. Կոմ. 20 թ. դեկ. 2 № 1

### Դ Ե Կ Ր Ե Տ

#### 3 ՊԵՏԱԿԱՆ ՀԵԶԻՒ ՄԱՍԻՆ

Հանրապետութեան սահմաններում պետական լեզուն ճանաչւում հայերէնը: Խոկ մուսուլմանքանակ վայրերում հայերէնին կից նաև թուրքերէնը:

Հ. Ս. Խ. Հ. Յեղկոմի նախագահ Ս. Կասեան

1920 թ. դեկ. 9

Հր. Կոմ. 20 թ. դեկ. 6 № 3

### Հ Ր Ա Մ Ա Ն

4 Նախկին կառավարութեան դիւնեագիտական ներկայացչութիւնների եւ միսիաների վերացման մասին:

Բոլոր զիոլոցատիկական ներկայացուցչութիւններն ու արտասահմաննեան միսիաները, հիմնած դաշնակների նախկին կառավարութեան օրով, ս. թ. նոյեմբերի 29. ից, Հայաստանը Անկախ Սոցիալիստական Հանրապետութիւն հոչակւելու մոմենտից կորցնում են իրենց լիազօրութիւնները:

Մինչև Խորհրդային Հայաստանի լիազօրներ ընդունելը, միսիաների բոլոր զոյքերի պահպանութեան պատասխանատուութիւնը առանձապէս ընկնում է մինչև այժմ միսիաների գլուխ կանգնած անձնաւորութիւնների վրայ:

Սոյն հրամանը չկատարողները Յեղափոխական Տրիբունալի կողմից պատասխանատուութեան կենթարկւեն:

Խորհրդային Հանրապետութիւններում հայկական միսիաների լիկութացիան կատարելու է Խորհրդային միսիաների անմիջական հսկողութեամբ:

Հ. Ս. Խ. Հ. Յեղկոմի նախագահ Ս. Կասեան

1921 թ. դեկտ. 6 ին

Հրատ. Կոմ. 20 թ. դեկտ. 6 № 4

### Դ Ե Կ Ր Ե Տ

#### 5 Աւանդուուլ հիմնելու մասին

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան սահմաններում հակայեղափոխութեան, շահագէտութեան (սպեկուլացիայի) և պաշտօնէ յանցագործութեան դէմ մաքառելու համար հիմնում է Արտակարգ Յանձնագործութեամբ ընկ. Այլագեանի, որին փոխանորդ է նշանակւում ընկ. Ամատունին, Արտակարգ Յանձնագործութիւնին կից հաստատում է Յատուկ Բաժին

Կարմիր Բանակում կատարւող հակայեղափոխական յանցանքների դէմ մաքառելու համար:

Հ. Ա. Խ. Յեղկոմի Նախագահ՝ Ս. Կասեան

1920 թ. Դեկ. 6

Հր. Կոմ. 20 թ. Դեկ. 9 № 4

## Հ Ր Ա Մ Ա Ն

6 Պատեմատուման մքերների եւ այլ նիւթերի յայտնաբերութեան մասին.

Յայտնւում է ի պիտութիւն բոլոր պետական և հաստակական հիմնարկութիւնների, նոյնպէս և մասնաւոր անձանց, որ նրանք ըստ մատուկաբարման կառավարչի՝ ընկ. Լոմիձէի և նոյն մասի կոմիսարի՝ պահանջի՝ պարտաւոր են տեղեկութիւններ տալ իրենց մօտ գտնւած պարենաւորման մթերքների, նոյնպէս և վառելիքի և լուսաւորութեան վերաբերեալ նիւթերի մասին:

Ցիշեալ մթերքները թագցնողները և նրանց մասին սխալ տեղեկութիւններ տուղները դատի՝ կկանչւեն Յեղարիբունալի կողմից:

Ետինայեղկոմի Ս. Կասեան  
ի. ա. Թաղմժողկոմի՝ Սիլին

1920 թ. Դեկտ. 8

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 10 № 5

## Դ Ե Կ Ր Ե Տ

7 Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի իրաւասութեան մասին.

Մինչև Հ. Ա. Խ. Սահմանադրութեան մշակումը՝ հաստատել հետեւող կանոնները Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի իրաւասութեան վերաբերմաբ:

1) Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը հաճգիւսանում է Հ. Ա. Խ. բարձրագոյն վարչական մարմինը, որի միջնով Հայյեղկոմը կառավարում է երկիրը:

2) Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի պարտականութիւններն են:

ա) Իշխանութեան կազմակերպումը տեղերում,

բ) Երկրի ամբողջ վարչական կազմի կենտրոնացումը, — գ) Բոլոր տեղական վարչական հաստատութիւնների վրայ վարչական հակողութիւն:

3). Երկրի վարչական կառավարման գործում՝ Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատին են ենթարկում Հ. Ա. Խ. Քուլոր տեղական, գաւառական և քաղաքային Յեղկոմիները (նախապէս և երեան քաղաքում):

4). Այսուհետեւ Յեղկոմների երկրի ներքին վարչակարգի վերաբերեալ հրատարակելիք բոլոր հրամաններն ու որոշումները, բացի նրանցից, որոնք բղխում են կենտրոնական իշխանութեան հրամաններից, պիտի հաստատեն Ներքին Գործերի Կոմիսարիատի կողմից:

5). Մինչև Հ. Ա. Խ. Յորհրդների ընտրութիւնները՝ Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը Հայյեղկոմի համաձայնութեամբ իրաւունք ունի նեռացնել և նշանակել տեղական Յեղկոմների բոլոր անդամներին:

Հ. Ա. Խ. Յ. Յեղկոմի Նախագահ՝ Ս. Կասեան

1920 թ. Դեկտեմբերի 14-ին

Հր. Կոմ. 20 թ. № 6

## Դ Ե Կ Ր Ե Տ

8 Գրամատիների ազգայնացման մասին.

Ժողովրդական տնտեսութիւնը կանոնաւոր կազմակերպելու, բանկային շահատակութիւնն արմատախիլ անելու և համայն ըստութեան, զիւղացիութեան և բանկային կապիտալի շահագործումից տուժող աշխատաւորութեան ազատադրման համար և Հ. Ա. Խ. Հանրապետութեան ժողովրդին ու չքաւոր դատին իսկապէս ծառայող միացեալ պետական բանկ ստեղծելու նպատակով Հայաստանի Յեղկոմը որոշեց:

1. Բանկային գործը յայտարարւում է պետական մենաշնորհ:

Հ. Ա. Խ. Յ. տերիտորիայի վրա գոյութիւն ունեցող միուսաստանի Պետական Բանկը, մասնաւոր առևտուրական բանկերի վարչութիւններն ու բաժանմունքները, փոխազարձ վարկի ընկերութիւնը միացւում են Հայաստանի Պետական Բանկի հետ:

2. Լիկիդացիայի ենթարկւող ձեռնարկութիւնների ակտիւն ու պատիւը ընդունում է Պետական Բանկը:

3. Մամաւոզ բանկերի գործերի ժամանակաւոր վարումը յանձնւում է յատուկ նշանակած կոմիտէի, որի կազմն ու կոնստրուկցիան որոշում է Հայաստանի Ֆինժողկումը:

4. Մանքաւանդրամիներ ունեցողների շահերը կաշտպանւեն համաձայն յատուկ հրամանգիր:

5. Մամաւոր բանկերի միաձուկումը Պետական Բանկի հետ սրոշում է Ֆինժողկումի յատուկ հրամանով:

Նախայցեղկումի Կառեան  
Ժմինժողկում Երզնկեան

1920 թ. Դեկտ. 10

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 22 № 14

### ՀՐԱՄԱՆ

Զ Երկարութիւներ - զօրական կացութեան մէջ յայտարարելու մասին

Ի նկատի ունենալով այն հանքամանքը, որ երկաթուղային երթևեկութիւնը գտնուում է քայլայւած դրութեան մէջ և անհրաժեշտ է այն վերականգնել, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան երկաթուղիները յայտարարում են գինուրական գրութեան մէջ, բոլոր ծառայողները ու բանուրները յայտարարում են գինակոչի հնֆարկւած և երկաթուղիների աշխատանքները տարւում են գինուրական ձեռփակութեան մէջ:

Երկաթուղու բոլոր ծառայողները, որ հիմնարկութեան մէջ էլ նրանք ծառայելիս լինեն, պարտաւոր են յետ զանալ իրենց տեղերը:

Նախայցեղկումի Ս. Կառեան

1920 թ. Դեկտ. 12

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 14 № 8

### ՀՐԱՄԱՆ

10 Հ. Ա. Խ. Հ. Կարմիր Բանկիի կոց Քարվաշուրին նիմներու մասին:

Յայտարարում եմ ի գեկավարութիւն, որ սոյն թից հիմնաւում է Հ. Ա. Խ. Կարմիր Բանկի Քաղաքական Վարչութիւն Քաղաքական Վարչութեան վարիչ նշանակում է լնկեր Լազեանը:

Քաղաքական բոլոր կոմիսարները թէ գինուրական մասերում

Կթէ հիմնարկութիւններում նշանակում են քաղվարչի կողմէց, որին և պէտք է գիմել բոլոր խնդիրների վերաբերմամբ:

Բոլոր կոմիսարները պէտք է ունենան պատշաճ մանդամներ քաղվարչի ստորագրութեամբ:

Ռազմժողկում Ա և Ի Ս

1920 թ. Դեկտ. 12

Հրամ. 20 թ. Կոմ. Դեկտ 18 № 11

### ՀՐԱՄԱՆ

11 Հին վաշչուկան նիմնարկութիւնների և պատօնեանների լիկիդացիայի մասին

Սոյն հրամանը հրատարակւելու օրւանից վերացւում են հետեւակալ հիմնարկութիւններն ուսպաշտօնները՝ նահանգապետութիւնները, քաղաքային ինքնավարութիւնները, գաւառական կոմիսարները, նախկին ներքին Գործոց նախարարութեան արտակարգ լիազօրները, միլիցիայի տեսուչները, նահանգապետական առեանները, Հանրապետութեան միլիցիայի պահեստը, բոլոր նրանց մօտ գտնւած զրասենեակներով և շատաններով:

Վերոյիշեալ հիմնարկութիւնների բոլոր ոլաշտօնեանները համարում են արձակւած, բոլոր պաշտօնեաններին հրահանգ լում է մնալ իրենց տեղերում գործերը յանձնելու համար: Արարատեան նահանգապետութիւնը, Երեանի քաղաքային ու գաւառային ինքնավարութիւններն յանձնում են գործերը Արարատեան Յեղկոմին: Բոլոր մնացած հիմնարկութիւններն և հաստատութիւնները գործերը, կահեկարասիքը, շնչարու և անշունչ ինվենտարը և այլն՝ յանձնում են տեղական յեղկոմներին, որոնք և պարտաւոր են կազմել իրենց միջիցթանձնաժողովներ այդ գործերը, ինվենտարը և այլն ընդունելու համար: Նախկին պաշտօնեանների ծառայութեան ընդունելութիւնը նոր հիմնարկութիւններում և նրանց գասաւորումը ըստ բաժինների կատարում են Յեղկոմները: Խոկ այն ծառայողները, որոնք մնում են շատափական համապատասխան տեղական յեղկոմներից ոռնիկ մինչև փաստական ծառայութեան օրը և լիկիդացիոնը կէս ամսաւայ ոռնիկի չափով:

Ներգործժողկում Դ. Դովլոթ Խան

1920 թ. Դեկտ. 13

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 14 № 8

## ՀՐԱՄԱՆ

**12 Զօրական ատեանների փոխանցման մասին.**

Նախկին ներքին գործերի Մինիստրութեան զինւորական գործերի գեղարտամենտը, Երևանի, Էջմիածնի, Նոր-Բայազէդի և Դիլիջանի գաւառական զինւորական ատեանները յանձնուում են Ռազմական Գործերի Ժողովրդական Կոմիտարիատին, ուստի և վերոյիշեալ ատեաններին հրահանգուում է կարճ ժամանակում բոլոր գործերը պատրաստել յանձնելու համար։

Նախկին զինւորական գործերի գեղարտամենտը և Երևանի զինւորական ատեանը յանձնում են իրենց գործերը անմիջականօքէն Հ. Ս. Խ. Հ. Ռազմական Գործերի Ժողովրդական Կոմիտարիատին։ Հանրապետութեան բոլոր մասցած վայրերում եղած զինւորական ատեանները յանձնում են իրենց գործերը տեղական յեղկոններին։

Ներքորդժողով Ի. Դովլաթեան

1920 թ. Դեկտ. 14

Հր. Կոմ. 20 թ. դեկտ. 15 № 9

## ՀՐԱՄԱՆ

**13 Կարմիր բանակի համար փոխադրական միջոցներ և ամսադրելու մասին.**

Գաւառային Յեղկոնների պահանջի գեղագում՝ աղջաբնակութիւնը պարտաւորում է հայթայթման պետք արամազութեան տակ անյատաղ զնել փոխադրական միջոցներ՝ Հ. Ս. Խ. Հ. Կարմիր Բանակի կարիքների համար։

Սոյն հրամանը չկատարւելու մէջ մեղադրւողները կպատժւեն յեղափոխական ժամանակի օրէնքների համաձայն։

Ռազմժողով Աւիս

1920 թ. դեկտ. 14

Հր. Կոմ. 20 թ. դեկտ. 18 № 17

## ՀՐԱՄԱՆ

**14 Խացած կարք և մանկանց սննդի մօնդին յանձնելու մասին Հայաստանի պահեստներում գտնւող ամբողջ խոացրած կաթը**

յանձնել „Մանկանց սննդի ֆօնդին Արգելուում է այսուհետեւ խառըթած կաթը բաժանելու ոչ երեխաներին։

Հ. Ս. Խ. Հ. Յեղկոնի Նախագահ Ս. Կասեան  
Սօցապժողով Հ. Կոստանեան

1920 թ. Դեկտ. 16

Հր. Կոմ. 20 թ. դեկտ. 16 № 11

## ՀՐԱՄԱՆ

**15 Ֆելդշերների եւ գրութեան բոյցերի մասնակի գօրացուման մասին.**

Ի նկատի ունենալով մասնակի գօրացրումը՝ վերացւում է նախկին կառավարութեան և. թ. օգոստ. 13-ի օրէնքը՝ Փելդշերուհիների և զթութեան քոյրերի մինչև 45 տարեկան գօրահաւաքի մասին։

Փելդշերները, սակայն, պէտք է մնան իսկական զինւորական ծառայութեան մէջ նոյն հասակներում, ինչպէս և մասցած կարմիր բանակայինները, ոյսինքն մինչև 32 տարեկան հասակը բաց տեսալ նախայեղկոնի՝ Ս. Կասեան

Ռազմժողով Աւիս

1920 թ. դեկտ. 16

Հր. Կոմ. 20 թ. դեկտ. 18 № 11

## ԳԵԿՐԵՑ

**16 Աւածութանակարգը գօրական կացութեան մէջ յայտարարելու մասին**

Ի նկատի ունենալով, որ Հ. Ս. Խ. Հ. աւածութանակարգը տնհեսութիւնը բայցայւած վիճուկի մէջ է և անհրաժեշտ է վերականգնել այն, Հ. Ս. Խ. Հ. աւածութանակարգը յայտարարելու վիճական զրութեան մէջ և նրան բոլոր բանակներն ու պաշտօնեանները յայտարարելու են մորիլիվացիայի ենթարկւած, իսկ աշխատանքները պէտք է կատարեն ուղղմական կարգով։

Նախայեղեղկոնի՝ Ս. Կասեան  
Փառահետապրական Ժողով Ուկանեան

1920 թ. Դեկտ. 16

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 21 № 13

## Հ Ր Ա Մ Ա Ն

17 Ասուցիչներին, առակերտներին և ուսանողներին զինուրական ծառայութիւնից ազատելու մասին

Այն ուսուցիչներին, որոնք գորաժողովի ժամանակ վարել են հաստատուն պաշտօններ և միջնկ. դպրոցների աշակերտներին մինչև 22 տարեկան հասակը, իսկ բարձրագոյն դպրոցների ուսանողներին մինչև 27 տարեկան հաստկը արձակել՝ գորաժողովներից հանակի պահեստ, փերցնելով նրանց մօտ դառնւած բոլոր ժողովրդական հագուստեղինը:

Արձակւելու համար՝ ուսուցիչները պէտք է ներկայացնեն համապատասխան իշխանութիւնից վկայական ծառայութեան մէջ դառնւելու մասին, իսկ աշակերտները դպրոցում դառնւելու մասին

Թաղմանդողկոմ Ա Հ Ի Ս

1920 թ. Դեկ. 16

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 21 № 13.

## Հ Ր Ա Մ Ա Ն

18 Կմիջներ և պրոմենե պատրաստելու մասին.

Հանրապետութեան մէջ իշխանութիւն փոփոխութեան հետեւածքով՝ անհրաժեշտութիւն է զգացւում փոխարինել զոյութիւն ունեցող կնիքները և զրոշմները նորերով: Այս առթիւ յայտաբարում էմ ի վիտութիւն բոլոր ժողովրդական կոմիսարների, բաժանմունքների կոստավարիչներին և Հանրապետութեան Խորհրդադյունի բոլոր այլ ճիմարկութիւններին երեք օրւայ ժամանակամիջջոցում ներկայացնելու Արարատեան նոհանգական Յեղկոմի վարչական բաժանմունքին ցուցախները պահանջող կնիքների և զրոշմների, (ինչպէս կնքամում) նոյնպէս և մասավելական) մանրամասն նկարագրելով և նկարելով իւրաքանչիւր կնիքի ձևը: Կնիքների ցուցակները պէտք է վաւերացւած լինին ճիմարկութեան զեկովարների կողմից և Արարատեան նահանգական Յեղկոմի հաստատումից յետոյ պէտք է արևեն պատրաստելու անյալագ: Վերոցիշնալ կնիքներ պատրաստող արհեստանոցները և անձննք կարող են այսիսի կնիքների պատէրներ ընդունել բացառապէս Արարատեան նահանգական Յեղկոմի վարչական մասի թոյլաւութեամբ, հակառակ պէտքում, կենթարկւեն գատաստանական պատասխանալութեան: Բոլոր ճիմարկութիւններն իրենց պէտք եղած այլ և այլ կնիքները (շտեմպել) պատէրում են կմարկութեան ղեկավարների գիտու-

թեամբ, առանց Արարատեան նահանգական Յեղկոմի վարչական մասի թոյլաւութեան: Նոր կնիքները պատրաստելուց յետոյ Հայուստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան բոլոր ժիմարկութիւններն անյալագ ոչնչացնում են հին կնիքները և այդ մասին կազմւած արձանադրութիւնը ներկայացնում են նահանգական Յեղկոմի վարչական բաժանմունքին:

Ներքգործողկոմ Դուլաթեան

1920 թ. Դեկտ. 16

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 22 № 14

## Հ Ր Ա Մ Ա Ն

19 Ացիալական ապահովութեան տեղական բաժիններ հիմնելու մասին.

Թողար աշխատաւորների, նրանց ընտանիքների, աշխատանքի անընդունակների, հաշմանդամների, հակայեղափոխութեան և տարբերութիւն չարիքներից անխնամ մնացած մանուկների սոցիալական ապահովութեան գործը կանոնաւոր հիմքերի վրայ գնելու, ինչպէս նաև հակայեղափոխութիւնից հալածւածներին համահաւասար օգնութիւն հասցնելու համար՝ երեանի և բոլոր քաղաքացին և կաւառական յեղկոմներին կից հիմնելու ևն սոցիալական ապահովութեան բաժիններ, որոնք անմիջապէս ենթարկւում են տեղական յեղկոմներին և ստանում են Սոցիալական Ապահովութեան Փողովրդական Կոմիսարիատից հրահանգներ և յանձնաբարութիւններ:

Սոցապաղկոմ, Կոստանդնական

1920 թիւ Դեկտ. 16

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 21 № 13

## Հ Ր Ա Մ Ա Ն

20 Զինւորական հոմազգեսների յանձնման մասին

Առաջարկւում է Հայաստանի բոլոր Յեղկոմներին խլել մասնաւոր անհատներից զինւորական համազգեսները և յանձնել Համբարձեային վարչութեան:

Նախհայյեղկոմի Ս. Կասեան  
Թաղմանդողկոմ. Ա Հ Ի Ս

1920 դեկտ. 17

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 21 № 13

## ԴԵԿՈՅԻ

**21** Հոգեւոր հաստատութիւններին պատկանող կուլտուր-կրթական  
հիմնարկութիւնների պետական ոցման մասին

Հ. Ս. Խ. Հ. գոճուած բոլոր ազգութեանց հոգեոր հաստատու-  
թիւններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկութիւնները (դպրոցները, հնագույնական և ազգագրական թանգարանները, մա-  
տենադարաններն ու ապարանները) իրենց ամբողջ շարժական և  
անշարժ գոյքով համարւում են պետական սեպհականութիւն և  
փոխանցում են Լուսաւորութեան Ժողովրդական կոմիսարիատի  
տնօրինութեան:

Հ. Ս. Խ. Հ. Յեղկոմի Նախագահ Ս. Կառեան

Լուսժողկոմ Ա. Յովհաննիսիսան

1920 թ. Դեկ. 17

Հր. Կոմ. 20 թ. Դեկ. 18 № 11

## ՀՐԱՄԱՆ

**22** Հոգեւոր հաստատութիւններին պատկանող կուլտուր-կրթական  
հիմնարկութիւնների պետական ոցման մասին

1. Հ. Ս. Խ. Յեղկոմի 17-ին Դեկտեմբերի հրատարակած  
թեկրեաի համաձայն՝ Հանրապետութեան մէջ գոճուած հոգեոր  
հաստատութիւններին պատկանող բոլոր կուլտուր-կրթական  
հիմնարկութիւնները և նրանց ամբողջ գոյքը ենթարկում են  
պետական ոցման:

2. Առաջարկում եմ աեղերում կազմակերպւած Յեղկոմիների  
Լուսաւորութեան բաժանմունքներին անմիջապէս ստուալ հոգեոր  
հաստատութիւններին պատկանող հիմնարկութիւնների գործերն ու  
գոյքը և գործազրել բանուրա-գիւղացիական մասնաների  
կրթական կարիքների համար:

Ժանօթութիւն. հջորդանի վանական ձեմարանը, հնագիտական  
և ազգագրական թանգարանները, մտանադարանն ու ապարանը՝  
որպէս ընդհանուր պիտական հշանակութիւն ունեցող հիմնարկու-  
թիւններ Հայաստանի աշխատավոր ժողովրդների սեփականու-  
թիւն դառնալով, ենթարկում են անմիջապէս Լուսաւորութեան  
Ժողովրդական կոմիսարիատին և վերակազմում վերջինիս կողմից  
նշանակւելիք կոմիսարի զեկավարութեամբ:

Լուսժողկոմ Ա. Յովհաննիսիսան

20 թ. Դեկտ. 17

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 19 № 12

## ՀՐԱՄԱՆ

**23** Կուլտուր-կրթական գործերի վերակազմութեան մասին.

1. Առաջարկում եմ սոյն հրամանը հրատարակելուց մի շա-  
բաթւայ ընթացքում Հանրապետութեան մէջ գոճուած բոլոր գեմ-  
ստուային և քաղաքային կրթական բաժիններին՝ անմիջապէս լիկու-  
գացիայի և նմիտուրկել իրենց գործունէութիւնը և յանձնել իրանց  
բոլոր գոյքն ու գործերը աեղական Յեղկոմների համապատասխան  
բաժանմունքներին:

2. Կուլտուր-կրթական բոլոր մասնաւոր հաստատութիւն-  
ներին, դպրոցներին, մանկապարտէզներին, գրադարան  
ընթերցա-  
րաններին, թատրոններին, կինևմատոգրաֆներին, ակումբներին և այլ  
միութիւններին (դպրոցական, գրական-գիտական, հրատարակչական,  
թատրոնական, երաժշտական և այլն) ու ձեռնարկութիւններին  
(տպարաններին, գրախանութներին, կիոսքներին), առաջարկում  
եմ սեպհատրացիայի ենթարկել սոյն հրամանն հրատարակելուց  
երեք օրւայ ընթացքում տեղական Յեղկոմների Լուսաւորութեան  
բաժանմունքներում:

3. Տեղական Յեղկոմների վրա պարագանութիւն է դրում  
անյապաղ լիկուգացիայի ենթարկել բոլոր սոյն մասնաւոր կուլտուր-  
կրթական հաստատութիւնները, միութիւններն ու ձեռնարկու-  
թիւնները, որ հետապնդում են ազգայնական, կղերական և առ-  
հասարակ հակայեղագիտական նպատակներ:

Ժանօթութիւն. Հոգեոր հաստատութիւններին պատկանող կուլ-  
տուր-կրթական հրմանարկութիւնները պետականացում են համա-  
ձայն Հ. Ս. Խ. Յեղկոմի 17 ին գեկա. հրատարակած ղեկրեաի  
և Լուսժողկոմի յառուկ հրամանի:

2. Մերձաւոր Արեւելքի օկուպիհան կոմիտէին ենթակալ բո-  
լոր կուլտուր-կրթական հաստատութիւնները չեն ենթարկուս  
սոյն հրամանին Հ. Ս. Խ. Յեղկոմի 14 ղեկանմբերի սրացման  
համաձայն լիկուգացիայի ենթարկեած հաստատութիւնների, մի-  
ութիւնների ու ձեռնարկութիւնների գոյքը գրաւում է և փո-  
խանցում աեղական Յեղկոմների Լուսաւորութիւն բաժանմունք-  
ների անօրինութեան:

Լուսժողկոմ Յովհաննիսիսան

1920 թ. Դեկտ. 17.

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 19 № 12

## ՀՐԱՄԱՆ

**24** Երեական Համարարկութիւն վերակազմութեան մասին



1. Երեանի Համալսարանը վերակաղմում է և վերակոչում  
երեանի ժողովրդական Համալսարան:

2. Նախկին Համալսարանի ֆակուլտետները փակում են և հի-  
մուռում է երկու բաժնութեան՝ բնագիտական և հասարակագիտական:

3. Նախկին Համալսարանի բոլոր պրոֆեսորները, դոցենտները,  
պրիւստ գոցեանները, դասատունները և ասիտենտները համարում են  
արձակւած:

4. Նախկին Համալսարանի գոյքի պահպանութեան ամբողջ պա-  
տասխանատութիւնը մինչև Համալսարանի լիակատար վերակաղ-  
մութիւնը ընկնում է հին վարչութեան վրայ:

5. Կուսաւորութեան Փողովրդական կոմիսարիատին կից կազ-  
մակերպում է Համալսարանի վերակաղմութեան յանձնաժողով,  
որի վրա պարտականութիւն է զրուում սոյն հրամանը հրատարա-  
կելու օրից մի շաբաթւայ ընթացքում ներկայացնել կոմի-  
սարիատիս հաստատութեան նոր Համալսարանի կազմակերպութեան  
հիմունքները, ծրագիրը, դասախոսների կազմը ու շտատները:

6. Յանձնաժողովի նախագահն է նըշանակվում ընկ կողբէտ-  
լեան, անդամներ՝ ընկ. ընկ. Չուրարեան, Պիճիկեան և ուսանողու-  
թեան երկու ներկայացուցիչներ:

Կուսավորութեան թույնանիստեան

1920 թ. Դեկտ. 17

Հր. կոմ. 20 թ. Դեկտ. 19 № 12

## ՀՐԱՄԱՆ

25 Նախկին Շուտովի Էլեկտրակայտրանի փոխանցման մասին.

Համաձայն Հայաստանի Յեղկոմի կարգովութեան՝ նախկին  
Շուտովի էլեկտրակայտրան անցնումէ փոստ հեռագրական կոմիսար-  
իատի իրաւունքն:

Փոստ հեռագրական ժողովրդական կոմիսար Հ. Ոսկանեան

1920 թ. Դեկտ. 17

Հր. կոմ. 20 թ. Դեկտ. 19 № 12

## ԴԵԿՐԵՏ

26 Թաղիօ կայտրանը գօրական կացութեան մէջ յայտարարելու  
մասին.

Ուժեղ-Թաղիօ կայանի քայքայւած տնտեսութիւնը վերա-

կանգնելու և վերաշխնելու համար ուժեղ Թաղիօ-կայանը յայտարար-  
ուում է զինւորական դրութեան մէջ. նրա բոլոր բանւորները ու  
պաշտօնեանները յայտարարուում են մորիլիզացիայի ենթարկւած.  
աշխատանքները պիտի տարւեն ուղմական կարգով:  
Նախայյեղկոմի Ս. Կասեան

1920 թիւ Դեկտ. 17  
Հր. կոմ. 20 թ. Դեկտ. 21 № 13

## ԴԵԿՐԵՏ

27 Փոստ-հեռագիրը եւ նեռախօսը գօրական կացութեան մէջ  
յայտարարելու մասին.

Հ. Ա. Խ. Հ. Փոստը, հեռագիրը և հեռախօսը գտնուում են  
քայքայւած դրութեան մէջ:

Ժողովրդական հաղորդակցութեան միջնորդի գործնէութիւնը  
կանոնաւորելու և աշխատանքի արդիւնաւետութեան բարձրա-  
ցման համար, վիստը, հեռագիրը և հեռախօսը յայտարարուում են  
գօրական կացութեան մէջ նորանց բոլոր բանւորները և պաշտօնեանները  
յայտարարաւում են մորիլիզացիայի ենթարկւած. աշխատանքները  
պիտի տարւեն ուղմական կարգով:

Նախայյեղկոմի Ս. Կասեան

Փոստ—հեռագրական ժողկոմ Ոսկանեան

1920 թիւ Դեկտ. 17

Հր. կոմ. 20 թ. Դեկտ. 21 № 13

## ՀՐԱՄԱՆ

28 Պատենտագրան գործերի կանոնաւուման մասին.

Այսու յայտարարուում է ի զիտութիւն բոլորի, որ:

1. Պարենաւորման մթերքների բաշխման նորմաների մշա-  
կումն և որոշումը, ինչպէս և բնագրումն, տեղափոխութեան  
սահման և արտահանման իրաւունքը պատկանում է միայն Պար-  
ողկոմին, առանց որի թոյլութեան ոչ մի պետական հիմնար-  
կութիւն, ինչպէս և մասնաւոր հաստատութիւն և անհատաւութիւնը:

2. Ընդհանուր սպառման պարենային մթերքների բաշխումը  
ազգայինաշութեան կառարուում է միայն Պարողկոմի և կը  
անդադական հաստատութիւնների ու կօպերատիւնների միջոցով:

3. Իւրաքանչիւր անջատ ձեռնորկութիւն այս ուղղութեամբ անպայման արգելում է:

4. Հրամանը չկատարողները կենթարկւեն դատի - զինուրացեղափոխական ժամանակի օրէնքներով:

Պարտողկոմ Ա. Բէկզադեան

1920 թ. Դեկտ. 18

Հր. Կոմ. 20 թ. դեկտ. 18 № 11

### ՀՐԱՄԱՆ

29 Գպրոցական կանոնաւոր պարագմանները վերսկսելու մտսին

1. Որովհետեւ համաձայն Ռազմժողկոմի սթ. դեկտ. 16-ին № 22 Հրամանի գօրաժողովի ենթարկւած ուսուցիչներն ու աշակերտաներն սարձակւում են գօրամասերից Բանակի պահեստ, աստջարկում են գպրոցների վարչական մարմիններին միջոցներ ձեռք տանեանյապաղ գպրոցական կանոնաւոր պարագմանքները վերսկսելու համար:

2. Առաջարկում եմ տեղական Յեղկոմների լուսաւորութեան բաժանմունքներին՝ ուսուցիչների գօրացրումից յիտոյ պարզել գպրոցական աշխատաւորների կարիքը տեղում և յայտնել այդ մասին Լուսաւորութեան ժող. կոմիսարիատին:

Խուժողկոմ. Ա. Յովհաննեսեան

1920 թ. Դեկտ. 18

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 21 № 13

### ՀՐԱՄԱՆ

30 Հիմ Պատարանների լուծման մտսին.

1. Հայտանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան սահմաններում դոյցութիւն ունեցող բոլոր դատական հիմքարկութիւնները համարել լուծւած:

2. Դատական անբողջ պաշտօնէութիւնը, բացի քննիչներից ու դիւնական ճառայնդներից, դեկանմբերի 15-ից համարել արձակւած:

3. Հատական բոլոր գործերը յանձնել ժողովրդական դատարաններին ու յեղափոխական տրիբունալներին՝ ըստ պաշտամ ընդունութեան:

4. Համաձայն սոյն հրամանի արձակւած պաշտօնէութեանը հատուցանել երկշաբաթեա ուսմիկի չափով լիկվիդացիան:

5. Դատական պաշտօնէութիւնը մնում է իր տեղում մինչեւ գործերի վերջնական ու փաստական յանձնումը նոր դատարաններին:

6. Սոյն հրամանի գանցառուները կենթարկւեն խիստ պատասխանատութեան, համաձայն յեղափոխական ժամանակաւ օրէնքների:

Արդողկոմ Ս. Յաղատեան

1920 թ. Դեկտ. 18

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 22 № 14

### ՀՐԱՄԱՆ

31 Հուրիերի և ինքնապատվան. միանալ տարեի զանձման մասին  
Առաջարկում եմ շտապ և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել,  
որպէսզի պետական ինքնապաշտպանութեան միանալ տուրքը և  
պետութեան հասանելիք ուրիշ տուրքերի գումարները ժողովւեն և  
մանցեն համապատասխան գանձարանները:

Նախհայյեղկոմի՝ Ս Կ ա ս ե ա ն

Հրամ. Կոմ. 20 թ. դեկտ. 18-ին № 11

### ՀՐԱՄԱՆ

32 Պետութեան հաստանելի գումարների հաւաքման մասին  
Առաջարկում եմ շտապ և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել՝  
հաւաքելու բոլոր գաւառային և գաւառակային կոմիսարներից պե-  
տութեան հասանալիք գումարները և մացնել գանձարան, համաձայն  
հարկային թերթերի:

Նախհայյեղկոմի Ս. Կասեան

1920 թիւ Դեկտ. 18

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 21 № 11

### ՀՐԱՄԱՆ

33 Հայրենակցական միուրիւնների կանոնադրութիւնների մասին  
Հրամայում եմ բոլոր հայրենակցական կազմակերպութիւն-  
ներին, որոնք գործում են Խորհրդային Հայաստանում ներկայա-

ցնել իրանց կանոադրութիւնները՝ և նրանց յետագայ գոյութեան վերաբերեալ տեսակէտները տեղական Յեղկոմիներին, Ներկայացնելու ժամանակամիջոցն է մինչև 1921 լունարի 1-ը։ Տեղական Յեղկոմներին ուղարկել յիշեալ կանոնադրութիւնները ներգործ Ժողկոմի վարչական բաժնին։

Ժամանակամիջոցում գոյութեան հայրենակցական կազմա կերպութիւնները պարտաւոր են ներկայացնել յիշեալ կանոնադրութիւնները ներգործ Ժողկոմի վարչական բաժնին։

Ներգործ Ժողկոմի ի. Դովլաթնան

Հր. Կոմ. 20 թ.

Դեկտ. 26 № 18

## ԴԵԿՐԵՏ

ՅԱ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. Պրամանիւների պատալից ընդանառութեան մասին

1. Սոյն գեկրեափ յայտարարման օրից Հ. Ս. Խ. Հ. Պրամանիւների վրա Հ. Ս. Խ. Հ. Հեկերի հետ միասին, յայտարարւում են պարտադիր շրջանառութեան համար և Ռ. Ս. Ֆ. Հ. Հ. Պրամանիւները։

2. Վերջին գրամանիշների կուրոի շրջանառումը որոշել այսպէս՝ Ռ. Ս. Ֆ. Ս. Թ-ի 1 բոլոր գրամանիշի տրժեքը հաւասար է նախկին գաշնակցական կառավարութեան չեկերի հինգ բուրլում։

3. Հ. Ս. Խ. Հ. Հասավարութեան նոր ձեի բաց թողնելիք գրամանիշները Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. Հ. Պրամանիւների հետ միևնույն կուրութեան։

4. Բոլոր քաղաքացիներն, ինչպէս և պետական ու հասարակական հիմնարկութիւնները միմիանց հետ հաշւէտւութեան ժամանակ պարտաւոր են ճշտութեամբ առաջնորդւել սոյն գեկրեափ։

5. Ռ. Ս. Խ. Հ. Պրամանիւները չընդունելու մէջ յանցաւորները, ինչպէս և սոյն գեկրեափի շարդ պարագափում որոշւած նորմայից ցածր կամ բարձր դնահատողները՝ կպատժւեն ամենայն խստութեմբ յեղափոխական ժամանակի օրէնքներով։

6. Սոյն գեկրեափ մացնել գործադրութեան մէջ հեռագրով։

Նախհայյեղկոմի Ս. Կասիան  
Փ. Ֆինժողկոմի Ե. Երզնկեան

1920 թ. Դեկտ. 20

Հր. Կոմ. 20 թ. դեկտ. 22 № 14

## Դ Ե Կ Բ Ե Տ

35 Ներման մասին.

Հայտատանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան Թագմայեղափոխական կոմիտէն, իր ձեռքը վերցնելով երկրի գերագոյն իշխանութիւնը, և կամենալով վերջ տալ հին կառավարութեան օրով կատարւած անարդարութիւններին, որոշեց։—

1. Ներմանի շնորհել և ազատ արձակել բոլոր այն կալանաւորներին, որոնք մինչև Հայտատանը Խորհրդային Հանրապետութիւն յայտարարելը դատական իշխանութեան որոշմամբ և կամ վարչական ճանապարհով բանապարկւած են եղել։—

2. Որպէս դասալիքներ և դասալիքների թագնոպներ ու օժանդակակողներ, զինւորական ծառայութիւնից ազատւելու նպատակով խեղանգամանողներին և ընդհանրապէս զօրական յանցագործութիւններով դատապարտւածներին, եթէ նրանք պետական գոյքեր և սազմամթերք չեն վասնել։

3. Բոլոր վարչական կարգով կալանաւորւածներին, բացի Հարաշաններից։

4. Միզմիլ բոլոր քրէական բանարկեալների պատիմը, կը

ճատելով որոշւած պատժի մասքած ժամանակը երկու երրորդ տոկոսով։

5. Յոյժ շտագ կարգով վերաքննել նախնական քննութեան բոլոր գործերը, եթէ մեղափրեալները բանարկւած են։

6. Ներկա հրամանի ոյժը չի տարածւում այն բոլոր յանցաւորների ու բանարարութիւնների վրա, որոնք աեղի են ունեցել Հայտատանի Հանրապետութիւնը Խորհրդային յայտարարելուց յետոյ։

7. Վաղակէտ արձակմամբ ազատւող բանարկեալների մասին կհրամարակւի յատուկ հրաման։

8. Սոյն հրամանի անմիջական գործադրութիւնը վերապահուեմ է Արդարադատութեան և Խազմամատկան Ժողկոմի մարներին։

Նախհայյեղկոմի Կասիան  
Արդժողկոմ՝ Ս. Բաղդատեան

1920 թ. Դեկտ. 20

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 24 № 16

## Հ Ր Ա Մ Ա Ն

**36 Սահմանային բաժնի փոխանցման մասին**

Հ. Ս. Խ. Հ. Յեղկոմի դեկտեմբերի 16.ի 1920 թ. որոշման համաձայն՝ Ֆինանսների ժողովրդական կոմիսարիատին կից եղած սահմանային պահակային բաժինն անցնում է Հ. Ս. Խ. Հ. Զօրական ժողովրդական կոմիսարիատի ենթակայութեան:

Ժ. Ֆինժողովրդական երգնելեան

1920 թ. Դեկտ. 20

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 22 № 14

## Հ Ր Ա Մ Ա Ն

**37 Ասեւու-ադիւնարեւական բաժնի փոխանցման մասին**

Հ. Ս. Խ. Յեղկոմի դեկտեմբերի 14.ի 1920 թ. որոշման համաձայն՝

1) Ֆինանսների ժողովրդական կոմիսարիատին կից եղած Առևտարաքիւնարեւական բաժինն իւր ենթակայ բոլոր ապրանքային ու մթերքային պահեստներով յանձնելում է Պարենաւորման կոմիսարիատին:

2) Յանձնման գործը կազմակերպելու և այն ՚ի կատարածելու համար Ֆինանսների ժողովրդական կոմիսարիատի կողմէց նշանակւում են ընկերներ Խաչարեան և Տէր-Յովհանիսեան:

Ժ. Ֆինժողովրդական երգնելեան

1920 դեկտ. 20

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 22 № 14

## Դ Ե Կ Բ Ե Տ

**38 Քաղաքացիական ակտերի գրանցման մասին**

1 Քաղաքացիական դրութեան ակտերի (մետրիկա) գրանցման գործը վերցնել հոգեւոր իշխանութեան իրաւուսութիւնից:

2 Յօդ. 1-ում յիշատակւած ակտերի վաւերացումը յանձնել Յեղկոմների համապատասխան բաժիններին:

3 Ներքին Գործերի ժողովրդական կոմիսարիատին կից կազմակերպել քաղաքացիական ակտերի վաւերացման կենտրոնական բաժին, իսկ Յեղկոմներին կից տեղական բաժանմունքներ:

**ԾԱՆՈԹ.՝ Սոյն բաժանմունքներում ժամանակաւորապէս նախագահում են տեղական ժողովրդական գատաւորները:**

4 Հոգեւոր հաստատութիւնները պարտական են չափաբերական մատեանները և յարակից բոլոր տւեալները անմիջապէս յանձնել Յեղկոմներին:

5 Ներկայ հրամանը զանցառութիւնները, պաշտօնեանները և քաղաքացինները կենթարկւեն խիստ պատասխանատվութեան՝ համաձայն յեղափոխական ժամանակում գործող օրէնքների:

6 Որդարադատութեան և Ներքին Գործերի ժողովրդական կոմիսարները լիտօրուում են մշտեկել մանրամասն հրահանգների գործադրութիւն սոյն հրամանի:

Նախայյեղկոմի Ս. Կասեան

Արդժողկոմ Ս. Բաղդադեան

Ներգործողկոմ. Ի Դովլաթեան

Հբատ. Կոմ. 20. դեկտ. 23 № 15

## Դ Ե Կ Բ Ե Տ

**39 «ՀԱՅԱՅ-ՕՐԻՆԱՑ»-ի գերածՄԱՆ ԵԽ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. ԴԵԿՐԵՏՆԵՐԻ ՊԱՐՏԱԴՐԱՑԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

1. Հայաստանի Հանրապետութեան սահմաններում վերանում է «Մուսական Կայսրութեան Հաւաք Օրինացը» այն բոլոր փոփոխութիւններով հանդերձ, որ մտցրել էին ժամանակաւոր Կառավարութիւնը, Անդրկովկասեան Սէյմը և Հայաստանի Խորհուրդը, Պարլամենտն ու Կառավարութիւնը:

2. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան սահմաններում գործող օրէնքներ համարւում են Մուսատանի Սոցիալիստական ֆելերատիւ Խորհրդային Հանրապետութեան օրէնքները, այն փոփոխութիւններով ու լրացումներով, որ կմտցնի Հայաստանի Յեղկոմն և այլ իրաւասութիւններութիւններ:

Նախայյեղկոմի Ս. Կասեան  
Արդժողկոմ Ս. Բաղդադեան

1920 թ. Դեկտ. 21  
Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 23 № 15

## Հ Ր Ա Մ Ա Ն

**40** Որբանոցները լուսժողկոմին յանձնելու մասին.

Հայաստանի Յեղկոմի որոշման համաձայն, Սոցիալական Սպահակովութեան Կոմիսարիատի հսկողութեան ներքո գտնւած բոլոր որբանոցներն անցնում են Փողովրդական Լուսաւորութեան Կոմիսարիատի սոցիալական դատիարակութեան բաժանմունքին:

Սոցիալական Ապահովութեան որբանոցային բաժանմունքին հրամայւում է անմիջապէս պատրաստել յանձնելու բոլոր գործերը Փողովրդական Լուսաւորութեան Կոմիսարիատին:

Ժանօթութիւն.— Այն որբանոցները,ուր խնամքում են մինչև երեք տարեկան հասակի որբերը, մասմ են Սոցիալական Ապահովութեան Կոմիսարիատի հսկողութեան ներքոյ:

Սոցալժողկոմ՝ Կոստանդնական

1920 թ. Դեկտ. 21

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 24 № 16

## Դ Ե Կ Բ Ե Տ

**41** Նեցուկների մասին

Այն անձիք, որոնք ներկայումս կոչվում են զինւորական ծառայութեան և հանդիսանում են իրեն ընտանիքի միակ նեցուկները այդ ընտանիքի ապրուսոր տապահովելու համար, իրենց նեցուկութեան մասին պատշաճ վկայական ներկայացնելուց յետո անմիջապես արձակել զինւորական իսկական ծառայութիւնից, տառնելով նրանց մօտ եղած բոլոր ժաղովրդական հագուստները:

Ազատուզներին յանձնելի ի հաշիւ հաշւառու հիմնարկութիւններին, իսկ նրանց թւի մասին յայտնել Գլխաւոր Շտաբ:

Նախայեղկոմի Ս. Կասեան

Ռազմժողկոմ Աւելիս

1920 թ. Դեկտ. 22

Հր. Կոմ. 24 թ. Դեկտ. 9 № 4

## Դ Ե Կ Բ Ե Տ

**42** Ժողովրդական Առողջապահութեան Կոմիսարիատ կազմակերպելու մասին

1 Հայաստանի Սոցիալիստական Խոհրդային Հանրապետութեան Ռազմա-Ցեղափոխական Կոմիտէի որոշմամբ կազմակերպւում է Ժողովրդական Առողջապահութեան Կոմիսարիատ:

2 Նախկին Խնամատարութեան Նախարարութեան Գլխաւոր Բժշկա-սանիտարական Վարչութիւնը և Գլխաւոր Զորա-սանիտարական վարչութիւնը, և Հ. Ս. Խ. Հ. բոլոր բժշկա-սանիտարական հիմնարկութիւնները, ինչպէսքաղաքային ու հաստրակական, նոյնպէս և մասնաւոր, ամբողջովին ենթարկուում է Առժողկոմի իրաւուսութեան:

3 Վերոյիշեալ բոլոր հաստատութիւնները պարտական են անշապաղ յանձնել իրենց գոյքերը, գործերը, հաշիւները և այլն Առժողկոմին:

4 Առողջապահութեան Փողովրդական Կոմիսարի տեղակալ նշանակուում է ընկ. բժիշկ ԳՐՕՆ

5 Ներկա հրամանը զանցառող պաշտօնէութիւնն ու քաղաքացիները կենթարկւեն Յէղովրիբունալին:

Նախայեղկոմի Ս. Կասեան

1920 թ. Դեկտ. 22

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 26 № 18

## Հ Ր Ա Մ Ա Ն

**43** Ժողովրդական դատարանների մասին

Համաձայն Հրաման № 2-ի վերացւած դատական հիմնարկութիւնների վոխարէն՝ Հ. Ս. Խ. Հանրապետութեան սահմաններում հաստատուում են Ժողովրդական դատարաններ:

Ժողովրդական դատարանների գործը արագացնելու համարաշարկուում է—

1. Նահանգներական, գաւառական և քաղաքային Յէղկոմներին յոյժ շատապ կարգով ներկայացնել Արդարադատութեան Կոմիսարիատ ժողովրդական դատարանի ցուցակը:

2. Բոլոր արհեստակցական միութիւններին ամենակարճ ժամանակամիջոցում կազմել և ուղարկել Արդարադատութեան Կոմիսարիատ ժողովրդական ատենակալների ցանկը՝ միութիւնների անդամների 5 հոգուն մի ատենակալի հաշւով:

3. Ժողովրդական դատարանը և ատենակալ կարող են լինել միայն աշխատաւորները և ոչ երբեք շահագործողները:

4. Ժողովրդական դատարանը ժողովայտիչ հանդիսանալ ու գործադրել Սոցիալիստական Խորհրդային իշխանութեան գաղափարները:

Արգժողկոմ Ս. Բաղրատեան

1920 թ. Դեկտ. 22

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 22 № 14

## ՀՐԱՄԱՆ

**44** Նախնական բնօնութեան գործերի վերաբննման մասին.

1. Յոյժ շատապ կարգով վերաբննել նախնական քննութեան բոլոր գործերը, երբ մեղադրեալները բանտարկւած են:

2. Վերաբննութեան արագացման համար նախնական քննութեան գործերը բաժանել դատական պաշտօնեաների մէջ:

3. Ազատել բանտարկութիւնից այն մեղադրեալներին, որոնց վերաբրւող յանցանքի նւազագոյն չափն երկու երեք տոկոսով կրծատելով՝ 3 ամսից պակաս է մնում, նախապէս հանելով նոյնպէս մինչև կրծատումը եղած-նախնական բանտարկութիւնը:

4. Սոյն հրամանով նախատեսնուած գործերի վերաբննութիւնը ղեկավարելու և վերահսկելու համար կազմում է յատուկ քննիչ յանձնաժողով:

5. Յատուկ քննիչ յանձնաժողովի նախագահ նշանակում է ընկ. Հ. Մկրտչեան և անդամներ՝ ընկ. ընկ. Պ. Պետրոսեան, Ա. Տէր-Յակոբեան և Եղիազարեան:

Արդժողկոմ Ս. Բաղրամեան

1920 թ. Դեկտ. 22

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 22 № 14

## ՀՐԱՄԱՆ

**45** Գծբախ դէպէերի նախարարագրման մասին

Այսու պարտադրւում է Առեարա-արդիւնաբերական ձեռնարկութիւնների մասնաւոր տէրերին և օպտարի աշխատանքով (տնային ծառաների և այլն) օգտուող անձերին՝ անյապաղ հաղորդել Աշխատանքի կոմիսարիատին իւրաքանչիւր գծբաղդ գէպը մասին ոչ ուշքան երեք օրւայ ընթացքում գծբաղդ գէպը:

Իւր ժամանակին յիշեալ աեղեկութիւնները չհազորդող անձինք կենթարկւեն Յեղափոխական տրիբունալին,

Աշխատադրկոմ Կոմասնեան

1920 թ. Դեկտ. 22

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 24 № 15.

## ՀՐԱՄԱՆ

**46** Նախանգների ու ցցաների վերացման մասին

1. Համաձայն Հ. Ս. Խ. Յեղկոմի ու թ. գեկաեմբերի 19-ի որոշման, վերացւում է երկրի բաժանումը նահանգների և Շրջանների:

2. Արարատեան Յեղկոմը անւանւում է Երևանի Գաւյեղկոմ:

2 Բոլոր գաւառական Յեղկոմներն և Արարատեան նահանգի Յեղկոմի մինչև այսօր ենթակա հիմնարկութիւններն այսուհետեւ ենթարկւում են անմիջականօրէն Հ. Ս. Խ. կենտրոնական Էմբանութեան:

Ներգործողկոմ ի Դովլաթեան

Հր. Կոմ. 20 թ.  
Դեկտ. 26 № 18

## ՀՐԱՄԱՆ

**47** Պահմնջագրերի ստացրութիւնների մասին

Բոլոր պահմանջագրերը, որով զրամ են ստացւում պետական գանձարանից՝ պէտք է ստորագրւած լինեն ժողովրդական կոմիսարների կողմից կամ այլ հիմնարկութիւնների կառավարիչների կողմից:

Պահմանջագրերը ստորագրելու իրաւունք սւնեցող վերոյիշեալ պատասխանատու անձինք պարտաւոր են իրենց ստորագրութիւնների նմանշներից մի մի օրինակ ուղարկելու պետական գանձարանին և պետական բանկին ի դիտութիւն:

Ժ. Ֆինժողկոմ Եզնիկեան

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 31 № 22

## ՀՐԱՄԱՆ

**48** Պետական բանկը ժողովրդական անապահութեան մասին

Սոյն հրամանը հրատարակւելու օրից Հայաստանի Սոցիալ-վաստական Խորհրդային հանրապետութեան պետական բանկնանանել Հ. Ս. Խ. Հանրապետութբան ժողովրդական բանկ:

1920 թ. Դեկտ. 20

Ժ. Ֆինժողկոմ Եզնիկեան

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 31 № 32

## Հ Յ Ա Մ Ա Ն

**49** Մասնաւոր բանկերը Հ. Ս. Խ. Հ. Պետական բանկի հետ ի մի ձուլելու մասին

Համաձայն բանկերի պետականացնելու մասին ո. թ. գեկտ. 20-ի հրամարակած դեկրետի յօդ. 6-ի, սրանով հրամայում եմ.

1 Նախկին մասնաւոր բանկերին և փոխադարձ վարկի ընկերութեանը առաջիկա 1921 թ. յունարի 1-ից դադարեցնել բոլոր գործողութիւնները և կազմել առ նոյն թիւը հաշւէկշիո իւրաքանչիւր յօդւածի ստորաբաժանումներով:

2 Առաջիկա 1921 թ. յունարի 2-ից Պետական Բանկը պարտաւոր է ընդունել նախկին մասնաւոր բանկերին հասանելիք վճարումները ի հաշիւ համապատասխան բանկերի հաշիւներին:

3 Նախկին մասնաւոր բանկերի ընթացիկ և այլ հաշիւներից Հ. Ս. Խ. Հ. Պետական Բանկը պարտաւոր է տուչութիւններ կատարել համապատասխան բանկերի ակտիւը և պատիւը ընդունելու օրից յետո:

4 Հ. Ս. Խ. Հ. Պետական Բանկի վարչութիւնը պարտաւոր է կազմել մի յանձնաժողով պետական վերահսկողութեան ներկայացուցչի մասնակցութեամբ, մասնաւոր և փոխադարձ վարկի ընկերութեան բանկերի ակտիւը և պատիւը ընդունելու համար:

5 1920 թ. յունարի 1-ից նախկին մասնաւոր և փոխադարձ վարկի ընկերութեան բանկերը պարտաւոր են յանձնել, իսկ Պետական Բանկի յանձնաժողովը ընդունել վերոյիշեալ վարկային հիմնարկութիւնների գոյքը և բարձրութեանը:

6 Յանձնաժողովը պարտաւոր է պետականացրած վարկային հիմնարկութիւնների ընդունելութիւնը վերջացնել ոչ ուշ, քան 1921 թ. փետրւարի 1-ը:

7 Պետական վարկային հիմնարկութիւնների պաշտօնեանները պարտաւոր են մաս իրենց տեղերում, որպես Պետական Բանկի պաշտօնեաններ, մինչև մինժողկոմի առանձին կարկաղրութիւնը:

Ժ. Ֆինժողկոմ Ե. Երզնկեան

1920 թ. Դեկտ. 28

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 31 № 22

## Դ Ե Կ Ռ Ե Տ

**50** Հողերի Պետականացման մասին

1 Բանտորագիրական ազգաբնակութեան հողագուրկ և սակաւահող մասը հողաբաժիններով ապահովելու և գիւղանտեսութեամբ զբաղել ցանկացողներին հողեր բաշխելու նպատակով, այլ և հանրապետութեան բոլոր կարիքները բաւարարելու համար, արքունական, նադելի, եկեղեցական, վանքային, վակուֆային, մեշետային, իրաւաբանական անձերի և մասնաւոր հողերը գառնում են հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան սեփականութիւն:

2 Սոյն գեկրեալ և յօդւածում յիշած հողերը յանձնելում են Գիւղանտեսութեան կոմիսարիատին ենթակայ Պետական հողային ֆօնդին:

3 Գիւղանտեսութեան կոմիսարիատին պարտադրում է կատարել Պետական հողային ֆօնդը մտնող բոլոր հողերի կանոնաւոր բաշխումը:

Հայյեղկոմի Նախագահ՝ Ս. Կասեան  
Հողժողկոմի փոխ՝ Ս. Կամուրական

1920 թ. Դեկտեմբերի 28-ին:  
Հր. Կոմ. 20 թ. № 2

## Հ Յ Ա Մ Ա Ն

**51** Կարմիր բանակայինների բռնագրաւումների մասին

Վերջին օրերը կարմիր բանակայինները ինչպէս երևանում, նոյնպէս և զաւառներում կատարում են ազգաբնակութիւնից պարենային մթերքների բռնագրաւումներ, առանց ունենալու պատշաճ իշխանութիւնից համապատասխան թոյլաւութիւն,

Հրամայում եմ բոլոր հիմնարկութիւններին և զօրամասերին բռնագրաւումներն կատարել միայն տեղական Յեղկոմների միջոցով, իսկ երևանում-զաւյեղկոմի միջոցով:

Սոյն հրամանը զանցառողները կպատժեն յեղափոխական ժամանակի խստագոյն օրենքներով:

Ռազմժողկոմ Ա Ի Ի Ս

1920 թ. Դեկտ. 28

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 28 № 18

## Հ Բ Ա Մ Ա Ն

**52 Բանկային գործառնութիւնների կանոնադրման մասին**

1. Պետական բանկում ընթացիկ հաշվեներ և աւանդադրամներ ունեցողներին տալ իւրաքանչիւր ամիս ոչ աւել քան 8000 ռուբլի Խորհրդային Ռուսաստանի գրամանիշներով կամ 40000 ռ. գործութիւն ունեցող չեկերով:

Ժանօթութիւն. 1. Բացառիկ գէպքերում որոշած 8000 ռ. աւելի կարող են տալ մինչողկոմի և Բանւորագիւղացիական տեսչութեանը փոխադարձ համաձայնութեամբ, սակայն իւրաքանչիւր առանձին գէպքում ոչ աւել և կամ 50000 ռուբլի Խորհրդային Ռուսաստանի գրամանիշներով 250000 ռ. գոյութիւն ունեցող գրամանիշներով:

Ժանօթութիւն. 2. Ընթացիկ հաշւով մուծւած գումարները և աւանդադրամները, որոնք մուծւած են պետական բանկը օտար վալիւտայով որպիսիք շրջանառութեան մէջ չեն Հայաստանի Հանրապետութեան մէջ, ժամանակաւորապէս, մինչև նոր կարգադրութիւնը, չեն վերադառնում:

2. Նոր ընթացիկ հաշվեներով և աւանդադրամներով մուծւած գումարները տալ տէրերին առանց գումարի սահմանափակութեարի:

3. Այն վալիւտային ապրանքները, օտար վալիւտան և առաջն հերթի մթերքները, որոնք գրաւ են եղել զրւած նախկին մասնաւոր բանկերում և Ռուսական պետական բանկի Երկանի բաժանմունքում, ժամանակաւորապէս մինչև նոր կարգադրութիւնը չվերադանել տէրերին:

Փ. Ֆինմոլկոմ Ե Երգնկեան

1920 թ. դեկտ. 28

Հր. Կոմ. 20 թ. դեկտ. 31 № 22

## Հ Բ Ա Մ Ա Ն

**53 Արտանոցները թերթութեան մասին**

Սօցիալական Ապահովութեան ֆոդ. Կոմիսարիատի հսկողութեան ներքո դանւած որբանոցներին ընդունելու մասին.—

Գործադրութեան առնելով Հ. Ս. Խ. Հ. Ցեղկոմի որոշումը, առաջարկում եմ ըոլոր գաւառային և շոշանային Ցեղկոմների ժողովրդական Լուսաւորութեան բաժանմունքներին յաջորդ տարւա յունարի 1-ից իրանց հսկողութեան տակ առնել իրանց անմիջաւ-

կան իրաւասութեան շրջանում գտնւած այն բոլոր որբանոցները, որ մինչև այժմ գտնւում էին Սօցիալական Ապահովութեան ֆոդովրդական կոմիսարիատի խնամքի տակ:

Ժանօթութիւն.—Լուսաւորութեան ֆոդովրդական Կոմ. տեղային կոմիսարիատն իր հսկողութեան տակ է առնում 3—16 տարեկան որբերին, թողնելով մանկահասակներին Ապահովութեան ֆոդովրդական ինսամբքին, իսկ չափահանիրեն բանւորական ոյժի ցուցակագրման և բաշխման բաժանմունքի անօրինութեանը:

Լուսաւորիկոմ՝ Հ. Յովիաննիսեան

1920 թ. Դեկտ. 24

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 28 № 19

## Հ Բ Ա Մ Ա Ն

**54 Հ. Ս. Խ. Հ. Ց. Պետական Բանկի կողմանին թեան մասին**

1. Ռուսական Պետական Բանկին նախկին բաժանմունքն անւանել Հ. Ս. Խ. Հ. Ց. Պետական Բանկ:

2. Նախկին ռուսական բանկի բաժանմունքի ամբողջ գոյքը և առ այն թվի գեկանքերի 30-ն բարանով եղած ակտիւ և պասիւր յանձնել Հ. Ս. Խ. Հ. Ց. Պետական Բանկին:

3. Հ. Ս. Խ. Ց. Պետական Բանկի վարչութեանը պարտաւոր է պետական կոնսորիի ներկայացուցի հետ միասին անմիջապէս ընդունել նախկին ռուսական Պետական Բանկի Երկանի բաժանմունքի ամբողջ ակտիւր և պասիւր:

4. Նախ քան Հ. Ս. Խ. Հ. Ց. Պետական Բանկի կանոնադրութեան հրատարակութիւնը՝ Բանկի վարչութեանը պարտաւոր է իր գործութիւնների ժամանակ առաջնորդուիլ Ֆինմոլկոմի ժամանակաւոր հրահանգներով:

Փ. Ֆինմոլկոմ Ե Երգնկեան

1920 թ. Դեկտ. 28.

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 31 № 22

## Հ Բ Ա Մ Ա Ն

**55 Լուսաւորութեան մայնիդական կոմիսարիատի կից ժողովրդական լուսաւորութեան կոլեգիա իրմնելու մասին.**  
Լուսաւորութեան ֆոդովրդական կոմիսարիատին կից հիմնում

Է. Փողովրդական Հուսաւորութեան կոլեգիա, որ գործելու է որպէս խորհրդակցական օրդան Հուսաւորութեան Փողովրդական Կոմիսարի նախագահութեամբ:

Կոլեգիայի անդամ են նշանակվում ընկ. ընկ. Դուրդարեան, Քէչկեղեան, Յովսէփեան, Աւետեան և Զարենց:

Հուսաժողկոմ Ա. Յովհաննիսեան

1920 թ. Դեկտ. 28

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 30 № 21

## Հ Ր Ա Մ Ա Ն

56 Երեւանի Ժողովրդական Համալսարանի կազմակերպութեան մասին.

1. Երեւանի Համալսարանի վերակազմութեան յանձնաժողովի աշխատանքները համարել աւարտած և յանձնաժողովը լուծւած: Ծահօթութիւն.—Մինչև Համալսարանի Խորհրդի կազմակերպութիւնը յանձնաժողովի նախագահը մնում է իր պաշտոնում:

2. Փողովրդական Համալսարանի սոյն հրամանին կցւած ժամանակաւոր կանոնադրութիւնը հաստատել:

3. Փողովրդական Համալսարանի Խորհրդին վերապահել մշակել Համալսարանի կեանքի ներքին կանոնադրութիւնը և յարակից մանրամասն հրահանգներ:

4. Հաստատել Փողովրդական Համալսարանի անձնական կազմի շտաբները:

Ա. 20 պլոֆեսոր

Բ. 30 դաստու

Գ. 7 լեզուների դասախոս

Ե. 10 տեխնիքական և գրասենեակային պաշտօնեաներ:

5. Հաստատել.—

Ա. Հասարակագիտական ֆակուլտետում դասառուներ՝ ընկ. ընկ. Արեգեան Մ., Աղբալեան Ն., Տէրտէրեան Ա., Ղափանցեան Գր., Արքահամեան., Լիսիցեան Լ., Մանադեան Յ., Մելիք-Ալլահվերդեան Գ., Պիճիկեան Գ., Տիգրանեան Ա., Էղիլեան Գ., Թորոմանեան Ա. Զուբարեան Գ. և Խոնդկարեան Ա.:

Բ. Բնագիտական ֆակուլտետում ընկ. ընկ. Յակոբեան Ա., Նալբանդեան Տ., Վարդապետեան Ա., Տէր-Պօղոսեան Աւ., Զաւըն Գ., Գուրգէնեան Գ., Ղամբարեան Ա., Սավիչ-Զաբլոցկի Կ. և Կողբէտէւան Ե.:

6. Երեւանի Համալսարանի շարժական և անշարժ գոյքի բոլոր գործերը, հաշիւներն և այլն փոխանցել Փողովրդական Համալսարանի:

7. Ներկայ հրամանի գործադրութեան և Փողովրդական Համալսարանի Խորհրդի առաջին նիստի հրաւիրման պարտականութիւններն ընկնում են Երեւանի Համալսարանի վերակազմութեան յանձնաժողովի նախագահի վրա:

8. Փողովրդական Համալսարանի Խորհրդին սկսում է իր գործունեութիւնը քաղաքում գտնւած անդամների կէսից ոչ պահու կազմական:

Հուսաժողկոմ Ա. Յովհաննիսեան

1920 թ. Դեկտ. 28

Հր. Կոմ. 21 թ. Յունշ. 4 № 24

## Հ Ր Ա Մ Ա Ն

57 Երեւանի Ժողովրդական Համալսարանի Ժամանակական կանոնադրութեան մասին

Ա. Համալսարանի նպատակն ու անելիքը.

1. Երեւանի Ժողովրդական Համալսարանը բանուորագիւղացիական ազատ գործոց է, որ մասսաների սեփականութիւնն է գարձնում բնական և սոցիալական գիտութիւններն ու նրանց ուսումնական բարութիւնն մեզօթները, նպաստելով կեանքի գիտակցական վերաբերութեանը կոմունիստական աշխարհականացեցքի հիմունքներով:

2. Վերոյիշեալ նպատակներին համար Փողովրդական Համալսարանը կազմակերպում է սիստեմական դասընթացներ և հաստածական դասախոսութիւններ, գործնական, լաբորատորական և սեմինարական աշխատանքներ, հրատարակում է ամեն տեսակ աշխատութիւններ և օժանդակիչ ձեռնարկներ, կազմակերպում է գրադարան, ընթերցարան, թանգարան և այլն:

Բ. Գիտական ուսումնական մասը.

3. Փողովրդական Համալսարանն ունի երկու ֆակուլտետ՝ ընագիտական և հասարակագիտական:

4. Ֆակուլտետը մշակում է առանձին առարկաների ծրագիրներ, ուսուցում է սեմինարական և լաբորատորական աշխատանքների պահը, վճռում է ընդհանուր և ընթացիկ ուսումնական հարցերը ֆակուլտետի որոշումները յայտնուած են Խորհրդին ի գիտութիւն:

**Խորհուրդը կարող է բեկանել գալութեամի որոշումները:**

**Ծանօթութիւն 1.—Դասախոսութիւնների և գործնական պարտապմունքների ժրադիրը մշակելիս պէտք է ի նկատք ունենալ, որ համալսարանը ձառյում է մասսաների ընդհանուր կրթական պահանջներին և պէտք է յարմարեի լսարանի պատրաստակութեամ առողջութիւնը:**

**Ծանօթութիւն 2.—Համալսարանի պարտապմունքները պէտք է առաջ տարւին լաբորատորական մեթոդի և ըստ կարելոյն քիչ ժամեր պէտք է յատկացի դասախոսութիւններին:**

**5 Յատուկ մասնագիտական պատրաստութիւն պահոնջող դասախոսութիւններ և պարագմունքներ կազմակերպում են, եթէ նախապէս առաջարկութիւն է արւած այդ մտախն 10-ից ոչ պակաս ունկնդիրների կողմից:**

**6 Գործնական, լաբորատորական և սեմինարական աշխատանքներին ունկնդիրները մասնակցում են աշխատանքները ղեկավարող դասաւուի համաձայնութեամբ:**

**7 Պակաս պատրաստութիւն ունեցող ունկնդիրների համար Խորհրդի թոյլտութեամբ կազմակերպում են խմբական հաստապ պարագմունքներ, այսպէս որ այդ պարագմունքները չստանան սիստեմատիք, նախապատրաստական դասընթացների կերպարանք, որպիսին կազմակերպում է երկրորդ առաջնանի դպրոցը:**

**8 Համալսարանի սիստեմական դասընթացներն ու պարագմունքներն ընդգրկում են կիսամեռայ կամ աարեկան շրջան:**

**9 Համալսարանի պարագմունքները տեղի են ունենում երեկոյեան ժամերին. ցերեկւայ պարագմունքները կազմակերպում են ունկնդիրների յատուկ համաձայնութեամբ:**

**10 Ունկնդիրներն ընդունեւում են տառնց քննութեամ 16 տարին լրացած անձինք մինչև Խորհրդի կողմից որոշած թւի լրացումը:**

**Ծանօթութիւն. — Առաջին հերթին ընդունեւում են բանութեամ ու չքառոր գիւղացիներն և տառ միւս քաղաքացիները:**

**11 Ուսումը համալսարանում ձրի է.**

**Գ. Ուսումնական կազմը:**

**12 Համալսարանի դասաւուները բաժանեւում են երկու կարգի՝ պրոֆեսորների և դասասաւների: Համալսարանի պրոֆեսոր կարող է ընդունել նա, ով ունի այդ կոչման համար անհրաժեշտ գիտական աշխատութիւններ և արժանիքներ:**

**13. Համալսարանի պրոֆեսորներին ու դասաւուներին ֆակուլտետի առաջարկութեամբ ընտրում է Խորհրդուրդը երկու տարով և հաստատում Լուսաւորութեամ փողովրդական կոմիսարը: Երկու**

**տարուց յետոյ նրանք ենթարկում են վերընտրութեան:**

**14 Ֆակուլտետի առաջարկով Խորհրդուրդը կարող է հրավիրել շտաբից գումար ևս դասախոսներ մասնագիտական դասընթացների կամ հատւածական դասախոսութիւնների համար, այլ և որ և է գիտական պարագմունքներ, էքսկուրսիոններ և այլն ղեկավարելու:**

**15 Պրոֆեսորների և դասախոսների համար աշխատանքների պարտադիր ժամանակը մասնագիտանում որոշւում է շաբաթական մից ժամ: Արտաժամեայ աշխատանքի ժամերը վճարուում են առանձին՝ ժողովրդական Աշխատանքի կոմիսարիատի որոշած նորմաներով և Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատի համաձայնութեամբ:**

**Դ. Համալսարանի կառավարութիւնը.**

**16 Համալսարանի բարձրագոյն մարմինը Համալսարանի Խորհրդուրդն է:**

**17 Խորհրդի մէջ մտնում են ֆակուլտետների երկու վարիչները, երեք ներկայացուցիչ՝ դասախոսներից, հինգ ունկնդիրներից և հինգ ներկայացուցիչ մի միական ժողովրդական կուլտուրութեան կոմիսարիատից, պրոֆեսիոնալ միութիւններից, Խորհրդային կուլտուրական կազմակերպութիւններից, Պրոլետկուլտից և Կոմունիստական կուսակցութիւնից:**

**18 Խորհրդի իրաւասութեան է ենթարկում ֆակուլտետների կողմից առաջարկում նոր դասախոսների ընտրութիւնն և Համալսարանի ամբողջ վարչութիւնը:**

**Խորհրդուրդն է կազմում համալսարանի նախահաշիւը և կատարում ծախսերը:**

**19. Խորհրդուրդն ընտրում է մի տարով ժողովրդական Համալսարանի վարիչ և նրա փոխանորդ՝ ժողովրդական Համալսարանի ամբողջ ուսումնական կազմի դասախոսներից, և քարտուղար՝ Խորհրդի անդամներից: Ֆակուլտետների վարիչների հետ նրանք կազմում են Խորհրդի նախահանութիւնը:**

**20 Ժողովրդական Համալսարանի վարիչը Խորհրդի և Համալսարանի անմիջական և պատաժիանատու ներկայացուցիչն է ինչպէս ներսը, նոյնպէս և զուրոր:**

**21 Ընթացիկ աշխատանքներն առաջ տանելու համար Խորհրդի նախագահաւթիւնը հրաւիրում է գրադարանապետ, գիւղանապետ, հաշուապահ, գանձապահ, տնտեսական մասի վարիչ և տեխնիքական պաշտօնեաներ:**

**22 Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատի ներկայա-**

ցուցիչն ունի վետօի իրաւունք Խորհրդի բոլոր որոշումների նկատմամբ։ Վիճելի խնդիրների վճռող բարձր ինստանցիան Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատն է։

23 Ֆակուլտետն ընտրում է մի տարով իր նախագահութիւնը, Փակուլտետի վարիչին, նրա փոխանորդին և քարտուղարին։

24 Համալսարանի և ֆակուլտետների վարիչների, նրանց փոխանորդների, նաև Խորհրդի և ֆակուլտետների վարիչների, նրանց աշխատանքը վճարում է առանձին։

Ե. Համալսարանի գործավարութիւնը.

25 Խորհրդի և ֆակուլտետների նիստերը լինելու են ամսական առնւազն մի անգամ։

Նիստերի օրինականութեան համար պահանջում է բոլոր անդամների մի երրորդի մասնակցութիւնը, իսկ նոր դասախուոններ ընտրելու և հին դասախուոններ վերընտրելու համար՝ երկու երրորդի ներկայութիւնը։

26 Խորհրդի նիստերը հրաւիրում է Համալսարանի վարիչը անմիջապէս և կամ թէ անդամներից առնւազն հինգ հոգու դրաւոր յայտարարութեամբ։ Այս վերջին դէպքում Համալսարանի վարիչը պարտական է մի շաբաթւայ ընթացքում Խորհրդի նիստը գումարելու մասին համար անդամների մասնակցում։

27 Խորհրդի նախագահութեան նիստերն են հրաւիրում է Փողովրդական Համալսարանի վարիչը անմիջապէս և կամ անդամների երեքի առաջարկութեամբ։

28 Խորհրդի և նրա նախագահութեան նիստերում հարցերը որոշում են ձայների հասարակ մեծամասնութեամբ, հաւասարութեան դէպքում թույլատրելով կրկնաքեցարկութիւն։ Մանօթութիւն. — Բացականների ձայնի փոխազբութիւնը ուրիշներին չե թոյլատրում։

29 Հարցերը լուծում են բաց ձայնառութեամբ, եթէ նիստին ներկայ եղողների քուսորդը չղանանջի դադանի քւէարկութիւն։

Մանօթութիւն. — Համալսարանի նախագահութեան և դասախուոնների ընտրութիւնները կատարում են անպայման դադանի քւէարկութեամբ։

Զ. Իրաւական դրութիւն.

30 Համալսարանը պետական նիմարկութիւն է և նրա պաշտօնէութիւնն օգտառմ է պետական պաշտօնէութեան ընդհանուր իրաւունքներով, եթէ միայն մասնակի դրութիւններ չեն ստիմանած։

31. Համալսարանն ինքուրոյն իրաւագէմք է և ունի իր յատուկ կնիքը։

32. Սոյն ժամանակաւոր կանոնադրութիւնը լրացնելու և փոփոխելու իրաւունքը պատկանում է Համալսարանի Խորհրդին, որի կազմւած նախագիծը հաստատում է Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարը։

Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեան

1920 թ. Դեկտ. 28

## ՀՐԱՄԱՆ

58 Կարմիր Զօրբերի բոլոր տեսակի բաւարարութիւնների հաւասարման մասին

Սոյն հրամանը հրատարակելուց սկսած Հայաստանի կարմիր զօրքերի բոլոր տեսակի բաւարարութիւնները հաւասարեցվում են առանց բացառութեան մ. թ. մ. Հ. 11-րդ բանակի համար ուղարկած նորմաներին ու տախտակներին, ուստի Հայաստանի նախ կին կառավարութեան այս նկատմամբ բոլոր կարգադրութիւններն և օրէնքները վերացվում են։

Մինչև այժմ կրկնակի և հռակի, ձրի և վճարովի տրւելիք օրապահիները, որ հաստատել է նախկին կառավարութիւնը, այսուհետեւ դադարեցվում են։

Ամեն մի զօրական ծառայող իրաւունք ունի պատշաճաւոր բաւարարման հիմնարկութիւնից օրապահիկ ստանալ միայն իւր համար։

Թագմժողկոմ Ա Հ Ա

1920 թ. Դեկտ. 29

Հր. Կոմ. 21 թ. Յուն. 6 № 25

## ՀՐԱՄԱՆ

59 Պաշտոնիումին կից Թագմական բաժնի կազմակերպման մասին

1. Խորհրդային Հայաստանի զօրքերին կանոնաւոր և սիստեմատիկ կերպով պարեն հայթայթելու համար Հ. Ա. Խ. Ժողովրդական Պարենաւորման կոմիսարիատին կից կազմակերպում է Թագմական բաժին, բացառաբար վարելու Խորհրդային Հայաստանի զօրքերի պարենաւորման գործը։

2. Ցիշեալ բաժնի հայեցողութեամբ գնդերում և նրանց հաւասար

զօրամասերում Ռազմաբաժինը կազմակերպում է գնդերի յատուկ պարենաւորման յանձնախումբ:

**Ծանօթութիւն.** — Գնդերի յանձնախմբերի պարտականութիւններն են բարունքները նոյն նն, ինչ որ հրատարակւում է Ռ. Ս. Յ. Հ. Պարժողկոմի Հ 412 հրամանում զօրքերին պարեն հայթայթելու զվարարութիւնների մէջ:

3 Պարժողկոմի Ռազմաբաժնին իրաւունք է արւում բոլոր հիմնարկութիւններից, ինչպէս ուղղմական, նոյնպէս և քաղաքացիութեան, պահանջել ամեն անսակի տեղեկանքներ և տեղեկութիւններ կարմիր բանակի զօրքերի պարենի հայթայթման վերաբերեալ:

4 Խորհրդային Ռազմատանի կամ որիէ պարենաւորման կազմակենբութիւնների մէջ ծառայած բոլոր ծառայողներին և այն անձերին, որոնք լաւ ծանօթ են երերի տնտեսական զրութեան հետ, անմիջապէս դործի ուղղել Պարժողկոմի Ռազմաբաժնի անօրինութեան տակ:

5 Պարժողկոմի Ռազմաբաժնի պետի ժամանակուր պաշտօնակատար է նշանակւում ընկեր Առնասուաովը:

### Թաղմաղկոմ Աւիս

1920 թ. դեկտ. 29

Հր. Կոմ. 21 թ. Յուն. 6 Հ 25

### Դ Ե Կ Բ Ե Տ

60 Իննապատասանութեան միավագ տուրի վերացման մասին.

Նախկին դաշնակների կառավարութեան որոշած միանուագինապատասանութեան առողջական համարւում է վերացւած սոյն գեկրետի հրատարակելու օրից, իսկ մինչև գեկրետի հրատարակելը այդ առողջի հաշւին մտցրած գումարները մնում են յօդուած զանձարանի:

Նախայցեղկոմի Ա. Կառեան

Փ. Ֆինժողկոմ Ե. Երզնկեան

1920 թ. Դեկտ. 30

Հր. Կոմ. 21 թ. Յուն. 1 Հ 23

### Հ Ր Ա Մ Ա Ն

61 Բանկային բնոյթ կրող գործառնութիւնների գաղտաման մասին.

Ի նկատի ունենալով, որ մասնաւոր բանկերի պետականուց-

մամբ բոլոր բանկային օպերացիաները կենտրոնանում են Հ. Ս. Կ. Հ. Պ. Կատական Բանկում, որանով առաջարկում եմ երեանի Պետական Գանձարանին 1921 թ. յունարի 1-ից դադարեցնել բոլոր բանկային բնոյթ կրող գործառնութիւնները և գանձարանում գտնված բոլոր բնոյթացիկ հաշվները և աւանդագրամներն իրենց մասնակութիւններով առ 31-ն դիկանմբերի 1920 թիւը յանձնել Պետական Բանկին, նրանց վերաբերող բոլոր զրքերի, բանկների, չեկային և այլ գրքոյինների հետ միասին:

Փ. Ֆինժողկոմ Ե. Երզնկեան

1920 թ. դեկտ. 30

Հր. Կոմ. 21 թ. Յուն. 1 Հ 23

### Դ Ե Կ Ր Ե Տ

62 Հնդկականութեան ներագրաբարի պետականացման մասին:

Խորհրդային Հայաստանի աերիտորիայում զանոնդ Հնդկարապական բոլոր հեռագրաբարերը դանում են Հայաստանի Հանրապետութեան սեփականութիւն:

Վերոյիշեալ լարերի շահագործումը, ինչպէս նաև նրանց խնամքը յանձնուում է Փաստ-Հեռագրական ֆողագրդական կոմիսարին, Հնդկարապական հեռագրաբարերի վերհսկող կայարաններում գոնուզ ամրող զոյքը հսկիչների կողմից պէտք է անմիջապէս զրուի Փաստողկոմի արամագրութեան տակ Փաստ-Հեռագրական համապատասխան հիմարկութիւնների միջոցով:

Նախայցեղկոմի Ա. Կառեան  
Փաստ-Հեռագր. Ֆողկոմ Ռազմական

1920 թ. Դեկտ. 31

Հր. Կոմ. 21 թ. Յուն. 1 Հ 23

### Հ Ր Ա Մ Ա Ն

63 Տեխնիկ մասնագետների գրանցման մասին:

Խորհրդային Հայաստանի բոլոր թէ պաշտօնավարող և թէ աղաս տեխնիքական ոժերը, նաև ամեն անսակի մասնագէտ ինժիներները, այս հրամանը յայտարարելուց յետոյ պէտք է երեք օրւա-

ընթացքում արձանագրւեն Հանրապետութեան տեխնիքական ռեժիսուր հաշվի առնող յանձնաժողովում, որ կազմւած է Ռազմժողկոմի, Հաղողակոմի և Փոստժողկոմի ներկայացուցիչներից, և գանում է Փոստժողկոմի շենքում։ Զարձանագրւողները կհամարւեն աշխատանքի ճակատի դասալիքներ և այդպիսիները կենթարկւեն ամենախստ պատասխանութեան։

Նախագյուղիումի՝ Ա. Կասեև  
Հաղժողկոմ՝ Օսկանեան

20 թ. Դեկտ. 31

Հր. Կոմ. 21 թ. Յուն. 1 Ն 23

## Հ Ր Ա Մ Ա Ն

**64 Վերաբնիչ տեսուչների, զաւառային (օրջանային) և քաղաքային դպրոցների տեսուչների պատումների վերացման մասին.**

1. Վերահսկիչ Տեսուչների, դաւառային (օրջանային) և քաղաքային դպրոցների ահսուչների պաշտօնները վերացւում են։

2. Բոլոր պաշտօնական գործերն ու պետական գոյքը յանձնում է տեղական Յեղկոմներին կից գործող Լուսաւորութեան բաժանմունքներին։

Լուսադողկոմ՝ Ա. Յովհաննիսեան

1920 թ. Դեկտ. 31

Հր. Կոմ. 21 թ. Յուն. 4 Ն 24

## Հ Ր Ա Մ Ա Ն

**65 Սիցական եւ արտական դպրոցների վերատեսուչների, տեսուչների, աւագ ուսուցիչների, վերակացուների, դաստիարական դաստիարակեների պատումների և կրթական հոգարաւծութիւնների ու ծնողական խորհուրդների վերացման մասին.**

1. Միջնակարդ և տարրական դպրոցների վերատեսուչների տեսուչների, աւագ ուսուցիչների, վերակացուների, դաստիարական դաստիարակեների պաշտօնները և այդ դպրոցներին կից գանուղ կրթական հոգարաւծութիւններն ու ծնողական խորհուրդները վերացւում են։

2. Մինչև դպրոցների մշտական խորհուրդների կազմակերպումը դպրոցական ինքնավարութեան պատասխանատու մարմինների հանգիսանում դպրոցական ժամանակաւոր խորհուրդը, որի կազմի մէջ մտնում են՝ ա) բոլոր դպրոցական աշխատաւորները, սովորութիւնների ներկայացուցիչները, որոնց թիւը դպրոցական աշխատաւորների քառորդն է կազմում, գ) ժողովրդական կուսակցութեան բաժանմունքի մի ներկայացուցիչ։

Ժամանակակից մասին դպրոցներում աշակերտական ժամանակակից ընտարութեան մասնակցում են վերջին երկու ներկայացուցիչների ընտարութեան մասնակցում են վերջին երկու ներկերի դասարանների աշակերտաշակերտունիները, իսկ երեսը աստիճանի դպրոցներում բոլորը։

3. Դպրոցական Խորհրդի Գործադիր մարմինը նախագահութիւնն է, որի մէջ մտնել չեն կարող 1920—21 թ. ուսում, տաթիւնն է, որի մէջ մտնել չեն կարող 1920—21 թ. ուսում, տաթիւնն է, որի մէջ մտնել չեն կարող անձինք բում վերատեսչի, տեսչի և աւագ ուսուցչի պաշտօն վարող անձինք։ Շահութութիւնն է բացառիկ գէպքում յեղկոմների լուսաւորութեան Ա. Յովհաննիսեան

1920 թ. Դեկտ. 31

Հր. Կոմ. 21 թ. Յուն. 4 Ն 24

## Հ Ր Ա Մ Ա Ն

**66 Դպրոցներում կրօնական առարկա դաստիարակելու արգելիք մասին.**

Պետական, հասարակական, ինչպէս և մտնաւոր դպրոցական հաստատութիւնների մէջ արգելում է որևէ կրօնական առարկա դաստիարակել և կրօնական դաստիարակել ծէս կրտսեր լուսադողկոմ՝ Ա. Յովհաննիսեան

1920 թ. Դեկտ. 31

Հր. Կոմ. 21 թ. Յուն. 4 Ն 24

## Հ Ր Ա Մ Ա Ն

**67 Սովորութիւնի գիտութեան չափ բանահանով արտայալսելու կարգի վերացման մասին.**

Կարգի վերացման մասին Սովորութիւնը ու վարչը գնահատելու համար Սովորութիւնի գիտութիւնը ու վարչը գնահատելու համար

Կործադրուղ թւանշանային սիստեմը՝ վերացւում է դպրոցական կեանքի բոլոր գէպքերում անխսիր:

Լուսադոկոմ Ա. Յովհաննիսիսան

1920 թ. Դեկտ. 31

Հր. Կոմ. 21 թ. Յուն. 6, № 25

## Հ Ր Ա Մ Ա Ն

68 Հոգիոր դասին պատկանող ամձանց դպրոցներում պահօնաւութեալու առգիւմինի մասին:

1. Հոգիոր դասին պատկանող ամձանց արդերում է որևէ պաշտօն վարել դպրոցներում և այլ կուլտուր. կրթական հաստատութիւններում:

2. Հոգիոր դասին պատկանող ամձինք կարգաթող լինելուց յետոյ կարող են ստանձնել վերև միշտ պաշտօնները, ամեն մի գէպքում յատուկ թոյլտութիւն ստանալով Լուսաւորութեան ժողովուկան կոմիսարիատից:

3. Այս արգելքը խսխտողները ենթակայ են յեղտփոխական արիբունակի դասին:

1920 թ. Դեկտ. 31

Լուսադոկոմ Ա. Յովհաննիսիսան

Հրատ. Կոմ. Յուն. 6, № 25

## Հ Ր Ա Մ Ա Ն

69 Զինուական ծառայութիւնից ազատած դպրոցական աշխատավութեալու մասին:

Այս բոլոր դպրոցական աշխատաւորները, որոնք ազատել են զինուրական ծառայութիւնից Ռազմժողկոմի № 22 հրամանի հայացն իրեն ուսուցիչներ՝ հրաւիրում են անմիջապէս ներկարիատի արամադրութեան տակ:

Զանցառուները կենթարկեն պատասխանատութեան յեղափոխական ժամանակի օրէնքների խստութեամբ:

1920 թ. Դեկտ. 31

Լուսադոկոմ Ա. Յովհաննիսիսան

Հր. Կոմ. 21 թ. Յուն. 7 № 26

## Հ Ր Ա Մ Ա Ն

70 Երածանիան գործիքների ցուցակագրման, հաւատի և բոնագրաւման մասին

1. Գաւառում գտնւող բոլոր երաժշտական գործիքներն առանց բացառութեան, պէտք է ենթարկեն ցուցակագրման, որի համար գաւառական յեղկոմների լուսաւորութեան բաժանմունքներին կից կազմում են յատուկ կոմիսիաներ: Ցուցակագրութիւնը կատարում է ցուցակագրման յատուկ թերթիկների միջոցով:

2. Բոլոր ցուցակագրում գործիքները գաւառական յեղկոմների լուսաւորութեան բաժանմունքների կողմից հաշի են առնելում: Ոյզ նպատակով գործիքների տէրերին արւում են յատուկ վկայագրեր, որոնք պէտք է վեց ամիսը մէկ տնգամ նորոգման ենթարկեն:

3. Հաշւի առնւած երաժշտական գործիքները կարիք եղած գէպքում կարող են բանագրաւել տեղական յեղկոմների լուսաւորութեան բաժինների թոյլտութեամբ:

4. Երաժշտական գործիքները բանագրաւում են բացառական պէս հիմնարկութիւնների ու միութիւնների կարիքների համար:

5. Երաժշտական գործիքները բանագրաւում են յատուկ ցուցակով, որ կազմում է տեղական յեղկոմների լուսաւորութեան բաժանմունքներին կից յատուկ կոմիսիան հետեւալ կարգով:

6. Առաջին ներթին բանագրաւում են այն գործիքները, որոնց տէրերը չեն օգտաւում նրանցից:

բ. Երկրարդ ներթին — այն երաժշտական գործիքները, որոնց տէրերը զբաղւում են երաժշտութեամբ, որպէս սոսկ սիրողներ: Ժանօթութիւնն. — Պրոֆիսիոնալների և երաժշտութեան ուսուցիչների գործիքները չեն բանագրաւում:

Լուսադոկոմ Ա. Յովհաննիսիսան

1920 թ. Դեկտ. 31

Հր. Կոմ. 21 թ. Յուն. 7 № 26

## Հ Ր Ա Մ Ա Ն

71 Գառալիութեան դէմ կուելու մասին

Այսու յայտարարւում է ֆողովրդական Ռազմական կոմիսարի պատկ՝ № 5 հրամանը Դեկտեմբերի 29-ից 1920 թ.

«Ամբողջ Հայաստանում դասալքութեան դէմ պայքարելու համար Թագմական ժողովրդական Կոմասարիատին կից հիմնում է դասալքութեան դէմ պայքարելու Դաշտային Յանձնաժողով (սոյն հրամանին կցւած յաւելածում յիշւած շտարով), որը դասալքութեան դէմ պայքարելու վերաբերմամբ պարտադիր որոշումներ մշակող և հրատարակող տեղական Կոմիտէների զործունէութեան ուղղութիւն տւող բարձրագոյն հաստատութիւնն է։ Տեղական Յանձնաժողովները հիմնում են Թագմական դասասական կոմիտատներին կից՝ Ռ. Ս. Խ. Հ. Կոմիտարիատի 1918 թւի № 338 հրամանում յիշւած շտարով։

«Տեղական բոլոր Յանձնաժողովները հաստատում են դասալքութեան դէմ պայքարող դաշտային յանձնաժողովի կողմից։

«Ինչպէս դաշտային, սոյնպէս և տեղական յանձնաժողովների մէջ կարող են հրաւիրել ուրիշ հիմնարկութիւնների ներկայացուցիչներ խորհրդակցական ձայնով։

«Դասալքութեան դէմ պայքարող բոլոր յանձնաժողովների վրա դրում է նաև արքունական գոյքի (զինորական զգեստի զէնքի և այլն) սպեկուլեացիայի դէմ պայքարելու պարտականութիւնն և նրա հաւաքումն ու բանտգրաւումը։

«Բոլոր զօրամասերը, սագմական Կոմիտարիատները, յեղկոմները, Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան կազմակերպութիւնները և բոլոր Խորհրդային հիմնարկութիւնները ամեն կերպ պիտի աջակցեն դասալքների դէմ կուռզ յանձնաժողովներին։ Դասալքութեան դէմ կուռզ դաշտային յանձնաժողովին նախագահը պէտք է շտապ կէրպով մշակի դասալքութեան դէմ պայքարելու անհրաժեշտ հրահանգներն ըստ Ռ. Ս. Խ. Ֆ. Հանրապետութեան մէջ գոյութիւն ունեցող ձեռնարկների։»

Նախորդաշտկոմին Ալյոշանով

1921 թ. Յունի. 1

Հր. Կոմ. 21 թ. Յունի. 11 № 29

## Հ Ր Ա Մ Ա Ն

72 Զրադացներն ու դիմքերը Պարժողկոմին փոխանցւելու մասին

1. Երկանում գտնւած բոլոր ջրաղացները և զինդերն անցնում

են Պարժողկոմի անմիջական հսկողութեան տակ մինչև նոր կարգութիւն։

2. Ջրաղացների և զինդերի բոլոր ծառայողները, բանտուներն և միւս աշխատազները համարւում են պետական ծառայողներ։

3. Ջրաղացների և զինդերի վերաբերեալ բոլոր զործերով գիմեր Պարժողկոմի արգիւնարերական բաժնեւ։

4. Բոլոր ջրաղացների և զինդերի տէրերն ու կապալառուները պարտաւոր են ներկայանալ Պարժողկոմի արգիւնարերական բաժնին յունւարի 5. ին, երեկոյեան ժամը 5. ին։

5. Սոյն հրամանն իր ոյժի մէջ է մտնում հրատարակման օրից։

Պարժողկոմ՝ Ա. Բէկզադիան

1921 թ. Յունի. 3

Հր. Կոմ. 21 թ. Յունի. 6, № 25

## Հ Ր Ա Մ Ա Ն

73 Բանտուական ոյմերի հաւատութեան և բաժինման բաժնի կազմակերպութեան մասին։

1. Առանց բացուութեան, ամեն տեսակի թէ մտնաւոր և թէ հասարակուկան ու պետական հիմնարկութիւնների և ձեռնարկութիւնների մէջ տեղ գտնելու գործը պիտի կատարւի միմիայն Բանտուական Ոյմերի Հաշւառութեան և Բաշխման բաժնի միջոցով։ Բանտուական Ոյմերի Հաշւառութեան և Բաշխման բաժնի միջոցով Բանտուական Ոյմերի Հաշւառութեան և Բաշխման բաժնի միջոցով պիտի այս գրկում են իրենց պաշտոններից։

2. Այս անգործ բանուորը, որը ցուցակագրուած է Բանտուական Ոյմերի Հաշւառութեան և Բաշխման բաժնում, իրաւունք չունի հրաժարելու իր մտնապիտութեան վերաբերող իրեն առաջարկւած պահանջմանքից, նաև սկ աշխատանքից, եթէ պակտում են սկ աշխատանքով պատղւող բանտորներ։

3. Անգործ բանուորն իրաւունքունի հրաժարելու ժամանակաւոր աշխատանքից... Երկու շաբաթից ոչ աւել տեսզ ժամանակաւոր աշխատանքից ուղարկւած անգործ բանուորը չի կորցնում իր հերթը աշխատանքից ուղարկւած անգործ բանուորը չի կորցնում իր հերթը աշխատանքից ուղարկւած անգործ բանուորը համար Բան-

4. Որոշւած ժամանակամիջոցում գիտութիւնների համար Հանդացնում է ցուցակից դուրս և կորցնում ցող անգործ բանուորը համարւում է ցուցակից դուրս և կորցնում

է իր հերթը և նորից դիմելու դեպքում նա ստանում է հերթական վերջին համարը։

5. Սոցիալիստական նպահովութեան կոմիսարիատից նպաստով օգտող անգործ բանւորը, եթէ չի ներկայանում զիտողութեան համար ստամանւած ժամանակին, զրկում է նպաստ ստանալու իրաւունքից։ Այդպիսիներին նպաստ տալու իրաւունքը վերականգնում է միայն որոշ ժամանակից յետոյ, որի որոշումը կախուած է Սոցիալական Ապահովութեան կոմիսարիատից։

6. Անգործը, եթէ մտնում է պաշտօնից երեք օրւայ ընթացքում պարտաւոր է այդ մասին տեղեկացնելու Բանւորական Ոյժերի Հաշւառութեան և Բաշխման բաժնին՝ վերագրաբնելով աշխատանքի ուղարկելու ժամանակի իրեն արւած կատարողական թերթիկը լրացրած ձևով։

7. Առաջին անգամ Զ. ԲԴ յօդւածի նկատմամբ զանցառու եղող անգործ բանւորը, անգործների ապահովագրութեան օրէնքների համաձայն, զրկում է Յ ամիս ժամանակով նպաստ ստանալու իրաւունքից և ստանում է աշխատանքի ուղարկելու հերթական վերջին համարը, իսկ երկրորդ անգամ թերանալու դէպքում զրկում է Բանւորական Ուժերի Հաշւառութեան և Բաշխման բաժնում ցուցակագրելու իրաւունքից, և նրա մասին, որպէս որոշ զբաղմունք չունեցող՝ Բանւորական Ոյժերի Հաշւառութեան և Բաշխման բաժնին ի զիտութիւն յայտնում է համապատասխան իշխանութիւններին։

8. Մասնաւոր անհատներից նրանք, որոնք անկախ Բանւորական Ոյժերի Հաշւառութեան և Բաշխման բաժնից, զործի կկոչեն բանւորներին կամ ծառայողներին, այդպիսիները՝ Բանւորական Ոյժերի Հաշւառութեան և Բաշխման բաժնի կողեզիայի կողմից կենթարկեն ոչ պակաս քան 10,000 ր. առողջանքի կամ մի շաբաթից ոչ պակաս բերդարդելութեան։

Խորհրդային հիմնարկութիւններն ու պաշտօնական անձինք, որոնք կխախախարեն այս ստամանւած կարգը, պատասխանատու են որպէս յանցապարտներ։

Անգործները բացի տօնուկան օրերից՝ ամեն երկու օրից յետոյ պարտաւոր են ցուցակագրելու։

Աշխաղկոմ Հ. Կոտորանին

1921 թ. Յունս. 3

Հր. Կոմ. 21 թ. Յունս. 6 № 25

## Հ Ր Ա Մ Ա Ն

74 Նամակների ու նեռագրեների վճարի վերացման մասին։

1921 թ. յունսարի մէկից վերանում է հասարակ նամակների վճարը բոլոր քաղաքացիների համար։

Նոյն այդ թից վերանում է բոլոր տեսակի նեռագիրների վճարը Հ. Ս. Խ. Հ. բոլոր հիմնարկութիւնների և անձանց համար, որոնք լիազօրւած են յատուկ մանդատով։

Յեղկոմի նախագահ Ս. Կասեան

1921 թ. Յունս. 4

Հր. Կոմ. 21 թ. Յունս. 7 № 26

## Հ Ր Ա Մ Ա Ն

75 Միակ նեցուկների ազատման մասին

Ի լրումն Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան 1920 թ. գեկտեմբերի 22-ի № 19 հրամանի՝ միակ նեցուկների մասին՝ հրամայում եմ նման կարմիր բանակային-նեցուկների մասին՝ հրամայում եմ նման կարմիր բանակային-նեցուկների միայն հետեւակ գօրամասերում, իսկ ների ազատումն կատարել միայն հետեւակ գօրամասերում և հեծելազօրում, հրետազօրում, ճարտարագիտական գօրքերում և յատուկ նշանակման խմբերում միակ նեցուկների ազատումը չկատարել։

Բաղմժողկոմ Ա ւ ի ս

1921 թ. Յունս. 4

## Դ Ե Կ Ր Ե Տ

76 Պետական Վերահսկողութիւնն Հ. Ս. Խ. Հ. Բանութա-Գիւղացիական Տեսարկեան Վերակազմութեան մասին։

Հանրապետութեան կենտրոնական իշխանութեան՝ տնտեսական կեանքի ու պետական կառավարութեան վերաբերեալ զեկրեանների կեանքի ու պետական կառավարութեան վերաբերեալ զեկրեանների կառավարութեան վայատակայտմար կատարածումն հսկելու և որոշումների արտղ ու նպատակայտմար կատարածումն հսկելու և վերաբերելու նպատակայտմար կառավարմար պետական և վերաբերելու նպատակայտմար կառավարմար պետական վերաբերեան վայատակայտմար զործին մասնակից դարձնելու աշխատաւորների վերաբերեան վայատակայտմար Հ. Ս. Խ. Հ. Բանութա-Գիւղացիական կոմիտէն լայն մասսաները Հ. Ս. Խ. Հ. Բանութա-Գիւղացիական վերաբերեան թէ որոշում է. . .

1. Գոյութիւն ունեցող Պետական Վերահսկողութիւնը, թէ

կենտրօնում և թէ տեղերում, վերակազմել Սոցիալիստական Վերահսկողութեան միուրոյն օրգանի, հիմք ունենալով Պետական Վերահսկողութեան օրգաններին բանուարների և գիւղացիների մասնակցութիւնն, և տալ նրան „Բանւորա-Գիւղացիական Տեսչութիւն“ անունը:

2. Բանւորա-Գիւղացիական Տեսչութեանը վերապահուում են Փողովրդական Կոմիսարիատի բոլոր իրաւունքներն ու պարտականութիւնները: Բանւորա-Գիւղացիական Տեսչութեան գլուխ է անցնում Փողովրդական Կոմիսարը և սրա նախադահութեան ներքոյ կազմում է Կոլեգիա, որի անդամները հաստատում են Հանրապետութեան Ռազմայիշտական Կոմիտէի կողմից:

3. Յանձնարարել Բանւորա-Գիւղացիական Տեսչութեանը անյապաղ ձեռնարկելու Պետական Վերահսկողութեան բոլոր օրգանների վերակազմութեան, մասնակց դարձնելով աշխատաւորների լայն մասսաները՝ Պետական կառավարութեան, տնտեսութեան և հասարակական կազմակերպութիւնների բոլոր օրգաններին վերահսկելու իրականացման:

4. Ի լրում բոլոր իրաւունքների, պարտականութիւնների ու նպատակների, որոնք վերապահուած էին նախկին Պետական Վերահսկողութեանը, Բանւորա-Գիւղացիական Տեսչութեան արևոտման և հետեւալ նպատակները:

ա) Խորհրդային հիմնարկութիւնների մէջ պայքարել գործերի բիւրոկրատականութեան ու ձգձման դէմ, ուժեղացնել նախնական, հետեւական ու փաստական վերահսկողութիւնը, կազմակերպել թուրցիկ վերստուգումներ և քննումներ Խորհրդային բոլոր մարմինների թէ վարչական և թէ տնտեսական կողմերի, նաև հասարակական կազմակերպութիւնների, հսկել կենտրօնական իշխանութեան գեկրեանների ու որոշումների իրագործման, թէ կենտրոնում և թէ տեղերում, նաև նրանց հալատակայտրմար կիրառմանը ներկայ ժամանակի պայմաններում, ստուգել Խորհրդային իշխանութեան բոլոր օրգանների դործունէութիւնն իրականութեան հետեւանքների տէսակետից:

բ) Հսկել բոլոր հիմնարկութիւններում ամեն տեսուկ գանգատների ու յայտերի ընդունելութիւնների կազմակերպմանը և նրանց կանոնաւոր ընթացքին, նաև կազմակերպել Բանւորա-Գիւղացիական Տեսչութեան կից յատուկ բիւրօ՝ պաշտօնատար անձանց անկանոն գործողութիւնների, զեղծումների ու իրաւագանցումների վերոյիշեալ յայտերն ընդունելու համար:

գ) Ներկայացնել ի ըննութիւն կենտրօնական ու տեղական

իշխանութիւնների՝ դիտումների և քննումների վրա հիմնաւորւած առաջադրութիւններ Խորհրդային իշխանութեան մարմինները պարզ դարձնելու, աշխատանքի մէջ զուգահեռականութիւնն, անտառներութիւնն, դիւնանական ձգձումները վերացնելու մասին, նաև պետական հետանքի այս կամ այն բնագաւառներում վարչական ամբողջ սիստեմի վերակազմութեան վերաբերեալ:

Ե) Դատի ենթարկել պաշտօնատար անձերին զանցառութիւնների ու յանցանքների համար և առաջադրումներ անել համապատասխան իշխանութեանն այդպիսիներին պաշտօնից հեռացնելու մասին:

5. Առանձին վարչութիւնների, կազմակերպութիւնների և ձեռնարկութիւնների կից դոյցութիւն ունեցող բոլոր վերահսկիչ ձեռնարկական օրգանները անցնում են Բանւորա-Գիւղացիական ստուգուղական օրգանները՝ անցնում են Բանւորա-Գիւղացիական Տեսչութեան իրաւասութեան տակ և վերակազմում են վերջինիս նպատակների համապատասխան:

6. Բանւորա-Գիւղացիական Տեսչութեանը իրաւունք է վերապահուում իւր ծառայողների կազմից, առանձին վարչութիւններին պահանձներում, հիմնել Տեսչութեան ներկայակեց կամ զանազան ըայններում, հիմնել Տեսչութեան ներկայացուցութիւններ՝ ծառայողների մի տեղից միւս տեղը փոխադրումներով:

7. Բանւորա-Գիւղացիական Տեսչութեան ժողովրդական կոմիսարի և միւս ժողովրդական կոմիսարների միջև ծագած տամիստիրի և միւս ժողովրդական կոմիսարնորկն լուծում են Հ. Ս. Խ. Ըահայյութիւնները վերջնականորեն կոմիտէի մէջ՝ Ռազմայիշտական կոմիտէի մէջ՝ Նախյեղկոմի՝ Ս. Կասեան

1921 թ. Յունի. 4

Հր. Կոմ. 21 թ. Յունի. 7 № 9

Գ Ե Կ Բ Ե Տ

ՀՀ Կարմիր բանակայինների ընտանիքների տպահովման մասին.

Կոչ անելով աշխատաւորներին մանելու Հայտատանի Սոցիա-կուն անելով աշխատաւորներին մանելու Հայտատանի Կարմիր Բանակը, վաստական Խորհրդային Համարապետութեան կարմիր Բանակը Գիւղացիական կառավարութիւնը կոչի հենց առաջին Բանւորա-Գիւղացիական կառավարութիւնը կոչի հենց առաջինի և թէ նրա օրից իւր վրա է վերցնում թէ կարմիր Բանակայինի և թէ նրա ընտանիքի վերցյիշեալ հոգուր:

Կարմիր Բանակայինների ընտանիքների լաւագոյն ապահովման նպատակով Հ. Ս. Խ. Հ. Յեղկոմը որոշեց:

1. Կարմիր Բանակայինների ընտանիքների անաշխատունակ անդամները, որոնք նրանց միջոցներով են ապրում, իրաւունք ունեն ամսական նպաստ ստանալու:

2. Անաշխատունակ անդամներ համարւում են—կինը, որ ունի երեխայ մինչև 12 տարեկ., զաւակները մինչև 16 տարեկ., ծնողները՝ հայրը մի 55 վեր, և մայրը 50 բարձր. հասակը՝ նմանապէս կինը, զաւակները, եղբայրները, քոյրերը և ծնողները, որոնք բժշկական քննութեամբ անաշխատունակ են ճանաչւել Սոցիալական Ապահովութեան Ժողովրդական Կոմիսարիատի սահմանադրութունում:

Ճանօթութիւն.—Բնաւանիքի անդամներ են համարւում նաև քաղաքացիական կինը, ամուսնութիւնից դուրս ծնւած զաւակներն ու որդեգիրները:

3. Նպաստը տրւում է ընտանիքի իւրաքանչիւր անաշխատունակ անդամի համար տւեալ տեղի (Երեսնում 6000 ր.) տարիՓային նւազագոյն վարձաչափի կիսի քանակով:

Ժանօթութիւն.—Նպաստի քանակը Սոցիալական Ապահովութեան Կոմիսարիատը կարող է փոխել, նայած Կարմիր Բանակայինների ընտանիքների ստացւած պարենային բաժինների:

4. Ազատել Կարմիր Բանակի շարքերում եղած զինակոչներին և կամաւորներին՝ նրանց ծառայութեան ամբողջ ընթացքում, ամեն տեսակի ուղղակի պետական հարկերի վճարումից, բացի բնական տուրքերից:

5. Ազատել նոյն հարկերից նաև Կարմիր Բանակայինների ընտանիքների անդամներին, եթէ նրանք իրաւունք ունեն դրամական նպաստ ստանալու համաձայն սոյն դեկրետի 1-ին յօդւածի:

6. Ազատել 1-ին յօդւածում յիշւած Կարմիր Բանակայինների ընտանիքներին նոյն անդամներին բնակարանացին վճարների հատուցումից՝ Կարմիր Բանակայինի ծառայութեան ամբողջ ժամանակում:

7. 1, 4, 5 և 6-րդ յօդւածներում բոլոր յիշատակւած արտօնութիւններով օգտւում են միայն այն Կարմիր Բանակայինների ընտանիքների անդամները, որոնք ազնւութեամբ կատարել են իրենց պարտքը Խորհրդային Բանայրա Գիւղացիական Հանրապետութեան հանդէպ:

8. Դասավիքների ու փախստականների ընտանիքները զրկւում են սոյն դեկրետում յիշատակւած նպաստների ու արտօնութիւնների իրաւունքից:

9. Եթէ դասավիքը զղայ ու կամովին վերադառնայ Կարմիր Բանակի շարքերը, նրա ընտանիքի իրաւունքը պարենային բաժին

և այլ արտօնութիւններ ստանալու համար վերականգնում է նոյն վայրկեանից, երբ նա վերադառնում է Կարմիր Բանակի շարքերը:

10. Սոյն դեկրետի իրականացումը կեանքում պարտադրուում է Սոցիալական Ապահովութեան Ժողովրդական Կոմիսարիատի վրա:

11. Սոյն դեկրետը ոյժի մէջ է մանում ազգարարման օրից:

Նախագիումի՝ Ս. Կասեան  
Սոցագժողկոմ՝ Կոստանեան

1921 թ. Յունի. 4

## ՀՐԱՄԱՆ

78 Լիեալ գիւղերի փայտերի մասին.

1. Արգելում է լքեալ գիւղերում եղած ամեն տեսակի ծառները կտրել և բնակարանները քանդել:

2. Այդ շրջանների ամբողջ փայտի ամեն տեսակը՝ անցնում է Պարտողկոմի տրամադրութեան տակ:

3. Այդ շրջանների փայտի արտահանութիւնը կնկատուի որպէս յափշտակութիւն և յանցաւորը կենթարկւի պատասխանատւութեան:

4. Առաջարկում է բոլոր յեղկոմներին և վարչական այլ մարմիններին ամենակտրուկ միջոցներ ձեռք առնել այս կարգադրութեան:

5. Գիւղերից եկող իւրաքանչիւր փայտ բերող սայլը պիտի ունենայ տեղական յեղկոմներից կամ գաղափարութեան մարմիններից վկա յական, որ այդ փայտը լքեալ գիւղերից բերւած չէ:

6. Սոյն հրամանի հրատարակման օրից այդ մասին եղած քոլոր կարգադրութիւնները կորցնում են իրենց ոյժը:

Պարտողկոմ՝ Ա. Բէկապեան

1921 թ. Յունի. 5

Հր. Կոմ. 21 թ. Յունի. 7 № 26

## ՀՐԱՄԱՆ

79 Ծրջանային սպառողական կենտրոնական կոռպերատիւնների լուծման մասին.

Ի նկատի ունենալով, որ շրջանային սպառողական կենտրոնական կոռպերատիւնները չեն համապատասխանում Խոր-

հրդային Հայաստանի Սոցիալիստական Հանրապետութեան կարիք-ներին, նրանց գործունէութիւնը կենտրոնացնելու և պետականաց-նելու համար յայտարարում եմ լուծւած համարել շրջաններում դոյութիւն ունեցաղ Ալէքսանդրապոլի «Շիրակ», Համարլուկ «Գառմինի», Դիլիջանի, Լոռւայ և Նոր-Բայազիկի շրջանային մի-ութիւններն իրենց շտատներով և համարել նրանց Հայկոպի բա-ժանմունքներ:

Հրահանգում եմ բոլոր շրջանային կոոպերատիւ միութիւններին անմիջապէս հաշւի առնել իրենց ենթակայ միութիւնների ամբողջ դոյքերը և ապրանքները, պարզել իրենց ակտիւը և պասիւը տո 1-ն յունարի 1921 թիւ և անյապաղ ներկայացնել Հայկոպի վար-չութեան: Շրջանային միութիւնների վարչութիւնների վրա պար-տականութիւն է ընկնում այդ բոլորը կատարել ամենայն ճշու-թեամբ, հակառակ դէպօռում նրանք պատասխանատու են յեղա-փոխական ժամանակի օրէնքով:

Պարժողկոմ Ա. Թէկզաղեան

1921 թ. Յուն. 5  
Հր. Կոմ. 21 թ. Յուն. 7 № 26

## Հ Ր Ա Մ Ա Ն

80 Արգմանական հիմնարկութիւնների ու պատութեանների հաշիները բան-գիւղտեսչութեան ներկայացնելու մասին:

Առաջարկում է ուազմական իշխանութեան բոլոր զօրամասե-րին, հիմնարկութիւններին, հաստատութիւններին և պաշտօնական անձանց այն հրամանը հրատարակելու օրից մի ամիս ժամանա-կամիջոցում ներկայացնել Բանտորա-Գիւղացիական Տեսչութեանը (նախկին Պետական Վերասնկողութեան) բոլոր հաշիները ստացւած կանխոյթների ինչպէս Հայտատանի նախկին գլխաւոր Համբարակ-ից, նոյնպէս և Խորհրդային Հայտատանի դորբերի հայթայթման վարչութիւնց:

Բանտորա-Գիւղացիական Տեսչութեանը յանձնւած կանխոյթային հաշիների պատճէնները ներկայացնելու Խորհրդային Հայտատանի դորբերի հայթայթման պետի վարչութեանը:

Սոյն հրամանը չկատարող յանցաւորները կենթարկւեն պատաս-խանաւութեան ուազմական ժամանակի օրէնքներով:

Պարզմողկոմ Ա ւ ի ս

1921 թ. Յուն. 5

Հր. Կոմ. 21 թ. Յուն. 9 № 28.

## Հ Ր Ա Մ Ա Ն

81 Գերի մեացած ուազմական պատօնելութեան նպաստանուման մասին:

Հրամայում եմ սոյն հրամանը հրատարակելու օրից գերի մասած հրամանաւարական և վարչա-տնտեսական կազմի և հարմիք բանակայինների ընտանիքներին բաւարարել մէկ ձրի՝ կարմիք բանակայինների օրապահիով, իսկ դրամական բաւարարութեամբ բանակայինի օրապահիով, իսկ դրամական բաւարարութեամբ, որ ստանում էին նրանց լրիւ ոռնչի կոպարի քանակութեամբ: 1920 թ. գեկտեմբերի 1-ից:

Զօրահրտմանատար՝ Դ ը օ

21 թ. Յուն. 5

Հր. Կոմ. 21 թ. Յուն. 12 № 30

## Հ Ր Ա Մ Ա Ն

82 Երեանի փողոցները տանեակատերի բաժանելու մասին

1. Երեան քաղաքի բոլոր փողոցները, ի մէջ առեալ նաև նորք ար-ւարձանը, բաժանում են տանեակատանների: Ամեն մի տանեակատան մէջ մտնում են աները համարնե- թեամբ առաջին առաջին տանեակատան մէջ մտնում են բով ըստ կարգի, այսինքն առաջին տանեակատան մէջ մտնում են թանեա- ն 1-ից մինչև № 10 ի մէջ առեալ աները, երկրորդ տանեա- ն № 11-ից մինչև № 20 ի մէջ առեալ աները, երրորդ կատան մէջ՝ № 21-ից մինչև № 30 ի այ ն:

Ըստ սմին պէտք է ի նկատ'ի ունենալ, որ հաշւի չեն առ- նում ուազմական կոմիսարիատին պատկանող կամ նրա կարիք- ների համար ամբողջովին բռնագրաւած աները:

2. Հրամայում եմ բոլոր տնտեսէրերին, անմիջապէս կազմակեր- պելով իւրաքանչիւր տանեակատան ժողովները, ընտրեն իրենց միջից տանեակատեա, որը պիտի լինի տւեալ տանեակատան մէջ մտնող տնտեսէրերից ամենահարուստը:

